

Սիոն

ԱՐՄԱՆԱԳԻՐ

ԿՐՈՎԱԿԱՐ - ԳՐԱԿԱՐ - ԲՈՂԱԱՄԻՐՎԿԱՐ
ՊԱՏՅՈՒՅԿԱՆ ՀՐԱՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԱՐՈՒԹԵԱՆ



Ի. ՏԸՆԻ - ԴԱՐ Ը. Հ. 1946

"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in
JERUSALEM — PALESTINE

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	ԵՐԵՎ
ԻՄՔ ԱԳՐԱԿԱՆ	
— Անդրամբիկ կոնդակը.	98
Հայրապետական զոյգ կոնդակներ.	100
ԳՐՕՆԱԿԱՆ	
— Թաւերժական ներկայութիւնը.	110
— Վատանելի ուրախութիւնը.	112
ԳՐՕՆԱՊԱՏՄԱԿԱՆ	
— Զարչարակաց զիսերը Աննա և Կայիշափայ Քահանայապետաց ապարանաց մեջ.	ՊԱՐԳՈՒ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍՍԱՆ 116
ԲԱՆԱՍՏԵՂՃԱԿԱՆ	
— Երբ ես մեռնիմ.	Շ.-Մ.
ՀԻՆ ԵԶԵՒԾ	
— Տաղ գանձան.	ՀՐԱՏ. Ն. Վ. ԾՈՎԱԿԱՆ 121
Ձեկոյց եւ Տեղիկալիք՝ Ամեն. Մրգազան Պատրիարք Հօր ուղեւարութեան ի Սուրբ Եջմիածին (Մրշ).	122
ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ	
— Հոգին անման.	Ի. Վ.
ԳՐԱ-ՔՆՆԱԴԱՏԱՏԱԿԱՆ	
— Քանի եւ հինգամեակ մը.	ԿԱՅՊ ՄԹՐԹԻԿ 130
ԲԱՆԱՍԻՒՐԱԿԱՆ	
— Կրուրիւն Ասուածաբանական Զխորհրդոցն Եկեղեցւոյ Մրբոյ.	ԱՐՏԱԿԱԶՄ ԱՐՔԵՊՈՒՏԱԿՈՂՈՍ 133
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ	
— Արքական ազդեցութիւնը հայերենի վրայ.	ԳՐՈՒ. Հ. ԱՃԱՌԵԱՆ 136
Ս. ՑԱԿՈԲԻ ՆԵՐՄԵՆ	
— Եջմիածին պատութակները Խոռոչներ Ս. Արռողյ մեջ.	140
— Եկեղեցական եւ Թեմական.	143
— Պատօնական եւ Այցելութիւններ.	144
— Գերե. Տ. Խորեն Արենպատ. Մանասեան մեր մեջ.	144

ԲԱԺՆԵԳԻՒՆ

ՍԻՐՈՆԻ Տարեկան բաժնեգիւնն է՝ բայրո Երկիրներու համար՝ Անզլ. Շիլին 6

կամ մէկ ու կէս Ամերիկեան Տօլար:

ԲԱԺՆԱՌՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԿԻԿ է

Հասցէ՛ Rédaction de la Revue Arménienne SION

Patriarcat Arménien, Jérusalem-Palestine

U h a ū

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1946

© 80ՏԵՏՈ - 80ՏԵՏՈ

6-7



ՆՈՐԻՆ Ա. ՕՄՈՒԹԵՒՆ S. S. ԳԵՂՐԳ Զ.

Документ: Актуальная литература, № 608

ԽՄԲԱԴՐԱԿԱՆԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

Երջանիկ է Սոււրբ Աթոռոյ Պաշտօնաթերթ Սիոնը, զարդարել կարենաւուն համար իր էջերը պատճէններովը Ամենայն Հայոց Հայրապետի առաջին սրբատառ գոնդակներուն, որոնք Արարատեան աշխարհի հայրենական քաղցրութիւններէն և Ս. Էջմիածնի նուրբական սրբութիւններէն՝ տարիէ մը ի զեր սպասուած և կարօտցուած զգացումներու և կայծերու գեղեցիկ աւաշը կը բերէն մեղի:

Ճշմարիտ Հօր և Բարի Հոգուապետի ձայնն է ան, Լուսաւորչի և իր արժանաւոր յաջորդներու, Ներսէսներու և Սահակներու, մինչև Խրիմեան և Խորէն իրարու յաջորդած Հայրապետներու սրտին տրոփիւնն է որ կը լսուի նորէն՝ անուշ և անպատոր կը ուղիղով, արի հոգիի մը կիսնսնակութեան մէջէն:

Ո՞վ որ կը ճանանայ զինքը, համօրէն Ազգին Վեհի, Հայաստաննեայց Եկեղեցւոյ նորընտիր Քահանայապետը, կարդալով կամ լսելով իր սրտէն ու զրչէն հոսած այդ բարախուն տողերը, պիտի ըսէ մտադիրը. ինքն է, շուրջ քառորդ գարէ ի զեր, Դէորդ Ե.Ի. և Խորէնի կողքին զործող, ազգին ու Եկեղեցին յոյսի և վատի ելեւէջի շրջաններու մէջ շուարի չկիտող, կամքին յարատեւ քաղցրութիւն խառննելու և սրտին խառնիքը անուշ ժակիտի մը ճանանչովը լսուաւորելու զաղոտնիքն ու չնորհքը ունեցող այն ժիր հոգնորականը՝ որ կը խօսի հայրենիքով բախտաւորուած և ի սփիւս ցրուած իր հօտին: Եթէ չկայ այսօր, աւազ՝, իր բնաշխարհիկ սահմաններուն մէջ բնակաւոր արեւմտեան հայութիւնը, Հայաստաննեայց վեց նահանգներուն և Կիլիկիոյ հոծ ընաշխութիւնը, որ իբրև քանակ և որակ միանգամայն, այնքան կարեւոր արժէք մը կը ներկայացնէր. սակայն մեծ է յոյը, ազգին Վեհին, ապագայի նկատմամբ, վասնիք հայուն Աստուածը մկան է հաշտ նայիլ այլնս իր հօտին և հեռու չէ այն օրը՝ երբ մեր կաթողիկոսները պիտի չզրեն այլնս, ուղղունեմք զգատարանդի զաւակունս մեր, նժդինեալս յայլ և այլ սահմանս և ի քաղաքս արտասահմանեան ազգաց...:

Անտարակոյս ուրախ է իր ճայնը, բախտորչ օրերու մէջէն է որ կուզայ միմիթրութեան և հրաւէրի այդ կոչը, ու երջանիկ է Մեծ Հոգուապետը, վասնիքի շուտառվ իր զիրքը պիտի վերադառնան տարագիր բեկորները իր բազմահազար հօտին: Եւ ինչ խրախուսիչ և զօրել է շեշտար երբ կը հրահանգէ իբրև հայր ամեննեցան որ ամէն հայ, ինչպէս միշտ, սիրէ Հայաստաննեայց Ս. Եկեղեցին, որ Մայրն է մեր հաւատքին, սիրէ իր նորանորոգ ու պայծառ ապագային զացող հայրենի երկիրը. որ ծնողները կատարեն իրենց պարտականութիւնը քրիստոնէական ողիով, Մայրենի Եկեղեցւոյ, լիզուի, Հայրենիքի և սրբազան բահմանեան ազգաց...:


աւանդութեանց սիրով դաստիարակելով իրենց զաւակները . որ Հայ ժողովուրդը որքան ատեն շարունակէ իր տարաշմարհիկ կեանքը , զիտնայ բարձր պահել իր Եղմիան անունը , իր ապրած երկրին օրէնքներուն և ընակակից այլ ցեղերուն հանդէա իր քաղաքացիական պարտականութեանց կատարումով . որ չմոռնանք երբեք Ս. Եղմիածինը , ազգային կենդանութեան սիրով , միշտ անանջատ պահելով ինքզինքնիս անկէ՞ իրքէ հարազատ զաւակներ մեր անձկալի մօրմէն , որ մեր Հայրենիքի ընդհանուր այս շրջափոխութեանը մէջ , զստահ ենք թէ պիտի չուշանայ վերապանելու իր դարաւոր խորհուրդին ամբողջ շքեղութիւնը , գտանալու համար Հայոց Հայրենիքին ոչ միայն հրայրքը , պատմական անոր կերպարանքին բիւրեղացումը , այլ և անդրադարձնելու ոգեղէն իրականութեան նոր խոռվքներ , նոր բիւրեղացումներ : Ու վերջապէս , ազգն ամբողջ , աննկատ և ողջամիտ իմաստութիւնն ունենայ խորենելու և ընդունելու թէ մեր ինաւուրց և ցանկալի Հայրենիքը յարութիւն առած է այսօր , ու անտեսական ճարտարագիտական և քաղաքակրթական բազմատեսակ ձեռնարկութիւններով վերականգնած , ի վիճակի է ոչ միայն պատսպարելու և կերպակրելու իր ամբողջ բնակիչները , այլ նաև շուտով՝ իր հովանին ներքեւ ընդունելու աշխարհի չորս ծայրերը ցրուած անհայրենիք Հայութիւնը . ու այս ամէնը՝ անհուն ջանքերովը Հայաստանի Խորհրդային ներկայ Կառավարութեան , որ ատո՞ր համար նոյնիսկ , իրաւունքն ունի անխսիր ամենուս սիրոյն , մեծարանքին և երախտավիտութեան :

Հայաստանի իմաստուն վարիչները իրենց հայրենասիրական ու Հայրենապատապան մեն ու սրբազն գործին մէջ զիտցան շմոռնալ Մեծ Պանդուխտ՝ Սփիւրքի Հայութիւնը , որ տակաւին երէկ հայրենի կիզիչ կարօտը իր հոգին խորը , ապազայի անընկճելի հաւատքով Սփիւրքի մշուշներէն կը նայէր այսօրուան Հայոց Հայրենիքին , և որ այսօր՝ այլևս երջանիկ , ճամբայ է ինկած կարաւան առ կարաւան մեր դարաւոր սպասումը պսակելու :

Ամէն Հայու նուիրական պարտքն է կանգ առնել Հայրապետական Կոնդակի բառերուն ամէն մէկն առջեւ յարցանքով եւ երկիւղածութեամբ , իբրեւ անառարկելի իմաստութեան գոհար պատգամմերու առջեւ , որ անկորնչական և սուրբ իրաւունքներու յուշը կ'արթնցնէ մեր մէջ , նոյնատեն նորոգելով մեր սիրտերուն խորը՝ անհրաժարելի պարտականութեանց զգացումը :

Եղմիածին կրօնական նուիրապետութեան մը կեղրոնը չէ միայն , այլ Հայուն հոգեկան Հայրենիքը , սերունդներու մտքին առջև և հոգին մէջ բիւրեղացած և լուսաւորչի կանթեղը , վառարանը ծեղին իմացական և բարոյական ձգտումներուն , ներշնչարանը իր ազգային իտէալին : Եղմիածին Աթոռ մը չէ միայն այլ Ռդի մը , հոգեկան շէնք մը : Խաղաղութեան դար մը անոր գարձուց իր շքեղ գերը , խաղաղութեան ուրիշ շրջան մը , զստահ ենք ատոր , պիտի ընէ զայն ընդունակ՝ գարձեալ սպասարկելու ցեղային ոգիի անմահ խորհուրդին :

ԽՄԲ.



ԱՐԴ ՖԱՌԱ ԵԲ Մ ՊՈՐՄՈՒԹԱԿԱ ԵՇԵ ԿԱՌՈՒ
ԱՅԻ ԵՎ ԽԱՂՈՍԱԿԱ ԵՎ ԽԱՂՈՍԱԿԱ ՀԱՅՈ ՄԱՑՐԱԳՈՅՆ
ԴՐԱԿԱ ԿԱՄԱԳԱԿԱ ԵՎ ԽԱՂՈՍԱԿԱ ՀԱՅՈ ՄԱՑՐԱԳՈՅՆ
ԱԿԱ ՄԱՅԻ ԵՎ ԵՎ ԵՎ ՄԱՅԻ ՄԱՅԻ ԵՎ ԵՎ ԵՎ ԵՎ

Ճնորհազարդ Կաթողիկոսի ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. ԳԱՐԵԳԻՆԻ Արքազան
եղբօր ՄԵՐՈՒՄ հարազատի, Ամենապատի Պատրիարքին ԵՐՈՒՍԱԼԵՄԻ Տ.
ԿԻԼԻԿԻ Արքեպիսկոպոսի և Տեղապահի Պատրիարքութեան Կ. ՊՈԼՍՈՅ Տ.
ԳԼՈՐԳՈՅ Արքեպիսկոպոսի, Գերապատի Առաջնորդաց, Արքեպիսկոպոսաց,
Եպիսկոպոսաց, Վարդապետաց, Քահանայից, Սարկաւագաց և ամենայն պաշ-
տոնէց Եկեղեցւոյ և հաւատացեալ համայն ժողովրդեան ՄԵՐՈՒՄ հարազա-
րդ ՄԱՅԻ ԱԹ-ՈՒՈՅ Ս. ԷջՄԻԱԾՆԻ ողջոյն հայրական և Օրնութիւն ՀԱՅՐԱ-
ՊԵՏԱԿԱՆ,

Այսու անդրանիկ կոնդակաւ ՄԵՐՈՎ յայտ առնեմք ամենայն ժողովրդեան ՀԱՅԱՍՏԱՆՆԵԱՅՅՅՅ եկեղեցին ի ԽՈՐՀՐԴԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ և ի ԽՈՐՀՐԴԱԾԻՆ ՄԻԱԽԹԵԱՆ, որպէս և հաւատացելոց, որ պիտեալք են ի ՊԱՐՄԿԱՍՏԱՆ, ի ՀՆԴԻԿԱՄ, յի՞րԱՔ, ի ՍԻՒՐԻԱ և Կ. ԼԻԲԱՆԱՆ, ի ՊԱՐԵՍՑԻՆ և յԵՒՒԻԳԱՌՈ, ի ՅՈՒՆԱՍՏԱՆ, ի ԲՈՒԼՂԱՐԻԱ և ի ՌՈՒՄԱՅՆԻԱ, ի ՖՐԱՆՍԻԱՆ, ի ՄԻԱՅՆԱՐԴԱՆ, ի ԿԱՐԱՎԱՐԻԱ, ի ԿԱՐԱԿԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԻԱ, յԱՐԳԵՆՑԻՆ և ի ԲՐԱԶԻԼԻԱ և յԱՅլ տեղիս, եթէ ի 22-Ն Յունիսի^շ ընդ նախազահութեամբ Շնորհադրդ Կաթողիկոսին ՏԸՆՆ Կիլիկիութ^շ կատարեցաւ ընտրութիւն ՄԵՐ յԱԹՈՒԻ Ա. ՀՈՒՍԱԿԱՐՄՐՀԻ միաբան հաւանութեամբ համօրէն 111 պատգամաւորաց, որք ժողովրդեալք էին ի Ս. ՀԶՄԻԱՆՑԻՆ, ի մերմէ աշխարհէս և յայոց Պատութեանց ընտրութիւն նորոյ Կաթողիկոսի: Իսկ յետ երկուոց աւուրց՝ ի 24-Ն նոյն ամսոյ ընկալաք զօծութիւն ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ի ձեռն Կաթողիկոսին Կիլիկիութ^շ և հազից եպիսկոպոսաց ըստ ծիսի և աւանդութեան ՀԱՅԱՍՏԱՆՆԵԱՅՅՅՅ եկեղեցին:

Զայս եկեղեցական-ԱԶԳԱԾԻՆ ԺՈՂՈՎ համարիմք արտաքոյ իմն կարգի ի պատմութեան մերում. զի զայս առաջինն ընտրութիւն և յօծումն կաթողիկոսի Ամենայն Հայոց եկեալ էին Շնորհազարդ Կաթողիկոսն ՏԸՆՆ Կիլիկիութ հանդերձ եկեղեցական և աշխարհիկ պատգամաւորօք. իւրովիք, որպէս և Ամենապատիւ Պատրիարքն Հայոց ԵՐՈՒՍԱԼԵՄԻ և Տեղապահն Պատրիարքութեան Հայոց Կ. ՊՈԼՍՈՅ, որով առաւել ևս հաստատեցաւ միաբանականութիւն եկեղեցւոյն Հայոց:

Արտաքոյ կարգի են ապաքէն և ներկայութիւն նախազահին Խորհրդոյ համայն Դաւանութեանց Խ. ՄԻՈՒԹԵԱՆ, որ յատկապէս եկեալ էր ի ՄՈԱԿՎԱ մայրաքաղաքէ, սոյնաէս և ներկայութիւն նախազահին Խորհրդոյ ՀԱՅԱՍՏԱՆ-ՆԵԱՅՅՅՅ եկեղեցիութ^շ: Ընդ որ գոյնանամք յայժ և պատիւ մեծ համարիմք ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՐՈՅՑ ՀԱՅՈՅ:

Ի ժողովի աստ քննեցան բազումք ինդիրք, որք հային ի վերակազմութիւն ՄԵՃԻ Տանս, ըստ տնտեսականին և ըստ վարչականին. հաստատեցաւ և նոր Սահմանադրութիւն ի տելի Պոլոտէնիսայի ըստ ոգւոյ պատմական աւանդութեանց եկեղեցւոյ մերոյ և ըստ արդի հանգամանաց: Զպատճէնս արձանագրութեանց ժողովյոյ և զՄահմանագրութեան ունիմք առաքել առ ամենայն Առաջնորդս և առ եկեղեցական Վաղչութիւնս ՀԱՅԱՍՏԱՆՆԵԱՅՅՅ եկեղեցիութ^շ ի զիտութիւն և յառժամանակեայ կիրառութիւն:

Քանզի ի փոխադրութեանէ Ս. ԱԹՈՒՐՈՅՑ ի ՍՍՈՅ յէ ՀՅՄԻԱՆՑԻՆ անցեալ էին աւելի քան զ500 ամ, ուստի ժողովն բարւոք համարեցաւ զայս մեծ և պատմական իրողութիւն յաւերժացուցանել յորելինական հանդիսիւ. զայսանէ տալով զիտել հաւատացելոց մերոց՝ ունիմք առաքել զառանձինն կոնդակ և հրանազս այսր որոշման:

Յերկրորդում նստի ընթերցաք ՄԵՐ զՑԵՂԵԿԱԳԻՐ ընդարձակ յաղազս նիւթական և բարոյական հանգամանաց Մ. ԱԹՈՒՐՈՅՑ տալով և զտեղեկութիւնս վասն նորոգ կարգադրութեանց Խորհրդային Կեդրոնական Կառավարութեան ընդ ստորագրութեամբ բարեացակամ նախազահի ի. Վ. ԱՍԱԼԻՆԻ[՛] համաձայն զրաւոր ինդրանաց ՄԵՐՈՅ, դնին ընդ տեսչութեամբ ԱԹՈՒՐՈՅՑ բոլոր շնութիւնք, որ ի մէջ պարսպաց և արտաքոյ նոցին. այն իսկ են շնութիւնն ոոր Վեհարանի, ծեմարանի, Տպարանի և Միաբանութեան և այլք: Ընկալեալ

Է ՄԵՐ իրաւունս բանալոյ տպարան՝ առ ի հրատարակել զպաշտոնական ամսաթերթն ու ԶՄԻՊԸՆԻՆ, զոր և տեսանէք իսկ, և զայլ եկեղեցական մատեանս պաշտման՝ ՀԱՅԱՍՏԱՆՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ. բանալ՝ ձեմարան նոգնո՞՝ առ ի պատրաստել պաշտօնեայս եկեղեցւոյ։ Արդէն իսկ ունիմք քանի մի վարդապետ ի նախկին սահնուց ձեմարանի և Ներսիսեան Դպրանոցի, յորոց զոմանս ձեռնադրեցք յեպիսկոպոսութիւն վասն առաջնորդութեան Թեմորէից Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ։

Յայտնեմք զուրախութիւն ՄԵՐ և զգոնունակութիւն հոգեսր եղածը ՄԵՐՈՒՄ Տ. ԳԱՐԵԳԻՆԻ՝ ՇՆՈՐԻՆԳԱՎԱՐՔ Կաթողիկոսի ՀԱՅԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ, որ ըստ եկեղեցական և աշխարհական պատգամաւորօք իւրովք նպաստաւոր եղէ յոյժ միասնականութեան ՀԱՅԱՍՏԱՆՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ և բարձր տրամադրութեան ժողովականաց, և առնասպարակ յաջող վերջաւորութեան ժողովոյս ըստ ամենայն մասանց։ Զնոյն յայտնեմք և Ամենապատիւ Պատրիարքին ԵՐՈՒՍԱԼԵՄԻ Տ. ԿԻՎՐՈՒ և ՏԵՂԱՊԱԿԻՆ Պատրիարքութեան Կ. ՊՈԼՍՈՅ Տ. ԳԵՂԻՐԴԱՅ Արքեպիսկոպոսի ԱՐՄԼԱՆՆԵԱՅՆ։

Օրհնելով զհամայն ժողովուրդ ՄԵՐ, զամենայն եպիսկոպոսունս, զքահանայս և զպաշտօնեայս եկեղեցւոյ, պատուէր ՀԱՅԱՍՏԱՆԻ տամք և յորդոր հայրական, զօրացուցանել զեղբայրական սէր առ միմեանս, առ եկեղեցին և առ ՄԵՐՈՒ ԱԹՈՒՌ նորա, առ պատմական Հայրենիս և ԽՈՐՀԻՄՈՒՅԻՆ ԿԱՐԱՎԱՐՈՒԹԻՒՆ նորա, զի սէր է աղբիւր ամենայն նիւթական, բարոյական և մտաւոր յառաջդիմութեանց և բարգաւաճմանցի։ Սիրեցէք զմայրենի լեզուն մեր, զզրականութիւն և զպատմութիւն նախնեաց, որ շաղկապք են միութեան և լրութեան ազգիս, մանաւանդ զրուեալ հօտին ՄԵՐՈՅ ի Սփիռու։ Յատուկ պատուէր տամք վերջնոցս, զօրացուցանել և կարգաւորել զդպրոցս, տալով զհայեցի դաստիարակութիւն մանկուոյն, զարթուցանելով ի նոսս սէր առ մայրենի եկեղեցին, որով կարեմք պահել զամբողջութիւն և զմիամունութիւն Ազգիս։ Մի խզեսցին մտաւոր և հոգեսր շաղկապք առ պատմական Հայրենիս, որ ծաղկեալ ծաղկի յամենայն մարզս ըստ ամենայն մասանց ընդդիովանեաւէն։ ԻՉԽՈՅՆՈՒԹԵԱՅՆ։

Օրհնեմք զպագային մեր՝ Մամուլ և յորդորեմք՝ Հայրաբարձր զուն գործել զարթուցանել զիտակցութիւն և գուէր յայս միտս եղայրամկան յարաբերութեան և կինաց։

Պատուէր տամք նաև պանդխտեալ հայոցի, որ ի սփիռու՝ լինել հաւատարիմ Պետութեանց յորոց զտեալ նոցա ասպնջականութիւն եղայրական։

Աստանօր յիշել կամիմք և զպառակտեալ վիճակ եկեղեցւոյս մերոյ ի ՄԻԱՅԵԱԱ ՆԱՀԱՆԴԻՄ, որ ցաւ է ՄԵՐ և համայն ողջամիտ հայոց։ Պատուէր տամք, որոց անկ է, լուծանել զամենայն անջատ կազմակերպութիւնս, որը չեն հաստատեալ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՅՑ. պարտ է նոցա ըստ հոգեսրին և ըստ վարչականին ենթակայ լինել Առաջնորդին՝ ՏԵՐԱՆ ՏԻՐԱՆ նորապսակ եպիսկոպոսին։ իսկ քահանայից խոսանալ հնագանդութիւն կատարեալ, որպէս վիճակաւոր Առաջնորդին իւրեանց, վերահաստատելով զմիութիւն պառակտեալ հօտին։

Զկարգաւորութիւն զործոյս յանձնեմք ի կատար ածել Տ. ՏԻՐԱՆ եպիսկոպոսին՝ հոգեսր զաւակի ՄԵՐՈՒՄ, ըստ մտաց կոնդակիս։

Յուշ առնեմք ժողովրդականաց ՄԵՐՈՅ, թէ որպիսի շարեաց աղբերք են այդպիսի երկպառակութիւնք ընդ յարկաւ եկեղեցւոյ, յորոց պարտ է զգուշանալ առ ի շնութիւն և ի պահպանութիւն Մայր եկեղեցւոյ։

թայց ունիմք յայտնել և զուրախութիւն մեծ, եթէ յաղթական վախճան ահաւոր համաշխարհային պատերազմին ըստ առաւելեալ չափու և կարողութեան մասնակից եղեւ և ազգ մեր համայն՝ առաքելով զորդիս իւր ընդդէմ նախայարձակ թշնամոյն, բազում հայազգի զօրավարք և զունդք կազմեալք ի հայոց, որպէս և առանձինն զինւորականք ի զանազան մասունս զօրաց, ժառանգեցին զանուն քաջութեան և զինւորութեան, բարձրացուցանելով զանուն Ազգիս ի հերոսական կարմիր Բանակին և ի համայն Խ. ՄիԱԽԹԵԱՆՆ. Խոկ մասցեալ քաղաքացիք Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ բերին զան և զախատանս օքնական լինելով յաղթութեանն նիւթական և բարյոյական օժանդակութեամբ:

Յաւելումք աստանօր, թէ առ այս զործ նուիրական ի պաշտպանութիւն Հայրենեաց ոչ միայն քաղաքացիք Խ. ՄիԱԽԹԵԱՆՆ ցուցին զբողուանուէր սէր և զիամակրութիւն, այլ և հաստուածք և զաղութք յարտասահմանեան Պետութիւնս ըստ յորդորանաց ՄԵՐՈՅՑ ցուցին զնոյն սէր և զիամակրութիւն, առաքելով զրամական նուէրս ի կազմութիւն Տանկաց ԱԱՍԱԽՆՑԻ ԴԱԽԹԻ և այլ օժանդակութիւնս ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՒՆ:

Յայտնելով զորհուակութիւն ՄԵՐ զայամ գործոյ հայրենասիրութեանց ցանկամք և հաւատամք, զի և յայսմենեաէ զնոյն փոյթ և եռանդն ցուցցեն ի շինաքրառութեան մերոց Հայրենեաց բանիւ և զործով:

Պատգամաւորք՝ եկեալք ի հեռաւոր վայրաց՝ տեսին աչօք իւրեանց զսքանչելի բարզաւածումն նորաբողբոջ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ տեսին զինթական շնարարութիւնն մայրաքաղաքին. զենդարձակ ծառազարդ պողոտայս և զարտարապետական զեղեցիկ և հայակապ շնութիւնն վասն պետական հաստատութեանց և բնակութեանց քաղաքացեաց, տեսին զթէատրոնն վառաւոր, զծուն Խորդքի, զիամալսարանական թաղամասն, զբագմատեսակ հիւանդանոցն, զկարգաւորեալ և զնոյն Թանգարանն՝ պատմական, զեղարուեստական, զհանրային զրադարան, զմին ի մեծագունից ի Խ. ԽԵԽԱՆԱԽԹԵԱՆՆ, զգեռազրատունն կարգաւորեալ և ճոխ, զպարծանս Ազգին, զհիմնարկութիւնն զիտութեանց և արուեստից, զԱկադեմիան զիտութեանց, զբագմաճիւր Համալսարանն, զկոմիտէն պահպանութեան հնութեանց, զերաժշտանոցն և զդպրոց նկարչութեանց և այլն. զբարգաւածումն երկրացործութեան և այլքործութեան, զործարանական և արդիւնաբերական հաստատութեանց. տեսին զնորահաստատած աղկեալ զաղութաւանն նորաքարի, Մալաթիայի, Նուպարաշէնի և այլն. զայս ամենայն պարտական եմք հովանաւորութեան Խ. ՄիԱԽԹԵԱՆՆ, յանդամոց որոյ մին է և Խ. ՀԱՅԱՍՏԱՆՆ:


Մաղթեմք զի առաւել զօրացիք Խ. իշխանութիւնն ոչ միայն յօպուտ ազգաց Միլութեան, այլ և վասն խաղաղութեան, ազատութեան և բարօրութեան հանուր մարդկութեան:

Ի վերջ բանիս վերստին օրհնելով զիամայն ժողովուրդն Հայոց աղօթս մատուցանեմք առ ԲԱՐՁՐԵԱՆՆ վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, զի ի խաղաղութեան ննանի բարօրութիւն ազգաց, ի խաղաղութեան զօրանան կօրոն և եկեղեցի:

Ծնորհք Տեառն մերոյ ՅԻՍՈՒԽՍԻ ՔԲԻՍՏՈՍԻ Եղիշի ընդ ձեզ և ընդ ամենսեսան. ամէն:

ԿԱԹԱՀԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԹՆ ՀԱՅՈՑ

ԳԵՂՐԴԳ Զ.



ԳԵՂՐԳՎԵԴԱՅԻ ԾԱՌԱՅՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՊՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ Ա.ՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱ.Մ.Մ. Ա.Հ.Գ.Ի. ԵՊՈՎՈՒԹԵԱՄ ԵՒ ԿԱ.ԹՈՂԻԿՈՍ Ա.ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԾԱՅՐԱԿՈՅՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱ.Մ.Ջ.Գ.Ա.Կ.Ս.Ն ՆԱ.ԽԱՄԵԽԱՐ Ա.ԹՈՈՈՈՑ Ա.Յ.ՐԱ.ՐԱ.ՏԵԱ.Ն Ա.ՌԱ.ՔԵԼ.Ա.Կ.Ն ՄԱ.ՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄՐԲՈՑ ԷջՄԱԾՆԻ

համայն հօգեւոր դասուն եւ ամենայն ժողովրդեամ նուիրէ ողջոյն հայրական եւ Օրինուրին ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:

ՄԵՐ այս անգրածիկ ՕՐԻՆՈՒՐԵԱՆ Կոնդակով յայտնում ենք ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ եւ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ, ինչպէս եւ ՍՓիհինքի համայն ՀԱՅ Ժողովրդին՝ թէ 1945 բարի Յունիսի 22-ին, Ա. ԷջՄԱՅԱՆԻ ՀՈՒԽԱԽՈՐՉԱՀԱՂՄՆ Մայր Տաճարում, ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ Ենորհազարց Տ. ԳԱՄԲԴԻՆ Ա. Կարողիկոսի նախագահութեամբ զումարուած ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԻԿԱՆ ԺՈՂՈՎԸ ընտեղ ՄԵԶ Ս. ԼՈՂՄԱԴՐՈՉԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ԳԱՀԱԿԱԸ՝ Ժողովին ենեկայ եղող 111 պատզամատութերի միաձանց հաւատուրեամբ: Նոյն ամսի 24-ին ընդունեցինք ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Օնում՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ծեփ եւ աւանդուրեան համաձանց, ինենց եպիսկոպոսների եւ հանդիսադիր ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ Ենորհազարց Տ. ԳԱՄԲԴԻՆ Կարողիկոսի ձեռովով:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՆ հնաւանդ սովորութեան եւ կանոնների թելադրութեամբ, նախան Օծումն, ծունե գրի Խման սեղանի առաջ եւ ուխտեցի ցանի հաւատարիմ մեալ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՆ, անխախ պահպանել ենու կանոնները, դաւանանեն ու աւանդուրիւնները՝ եւ անձնուրիւրեամբ ծառայի ՀԱՅ Ժողովրդին եւ ՀԱՅՐԵՆԻՔԻՒ:

Ամենայն Հայոց ՀԱՅՐԱՊԵՏԻ կոչումն, Ա.ԶԴԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԻԿԱՆ Ժողովի կատարեալ վատանուրիւնը եւ հաւատացեալ հօսիս ոսկեվառ ակնկալուրիւնները խորապէս յուզում են սիրս եւ նեռում հոգին՝ զգացնելով ԻՆՉ պատականութեանս ու պատախանաւութեանս ծանրութեանը:

Մարտու եմ զոյում յիշերվ ծաներ պահանջանուրիւնները եւ բազմապիսի հոգսերը, որ Ամենայն Հայոց ՀԱՅՐԱՊԵՏԻ ուսերին է բարձած, եւ խորհում եմ՝ պիտի կարողանա՞մ արդեօք ծերութեան հսկակում, խղճ մօս կատարել պարօքա. պիտի յաջողութէ արդեօք ԻՆՉ Ենեբնապէս ու արտանայակ հիմնովին վերանորդիլ հայ հնագարեան բանկարծէք կորողը՝ Ս. ԷջՄԱՅԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՅԱՐԸ:

Պիտի կարողանա՞մ արդեօք նորաբաց հոգեւոր ՃԵՄԱՐԱՆԸ իր բարձրութեան հասցնել՝ մատակարարելով հայ եկեղեցուն արժանաւոր հովիւներ:

Պիտի կարողանամ արդեօք, որպէս անկ է, կազմովերպել ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԽԹԵԱՆ և մասնաւել ՍՓիհիմթի ՀԱՅՈՑ ԹԵՍԵՐԸ, որ հայ ժողովուրց հոգեպէս միշիքարուած լինի, տնիսա յան ծանը պայմանների դիմանա եւ՝ օտար աշխահինուում, կուլուրապէս բրուժ ժողովուրիների մեջ ապրելով չլուծուի ու շահեանսյ: Պիտի կարողանամ արդեօք եկեղեցական միասնականուրեան հետ զօրացնել ու պահպանել նաև համազգային միուրինը, որոնք զօրեղ զրաւականներ են մեր ազգի համեասի աղեղուն, զօրանալուն եւ զարգանալուն:

Պիտի տեսնեմ արդեօք օտարուրեան մեջ ցոյք ու ցրի ընկած ՀԱՅՈՒԽԹԻՒՆԸ համախրմուած իր հայրենին երկրում՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԵԿԱՆՍԻԹԵԱՆ ներքոյ, որ աշխ խուղալ զոցենք, հոգուս ու մարմնիս հանցիս տամ եւ հայ ժողովրդի ոգորչիսը լսեմ:

Այս խոհերի մեջ՝ յիշում եմ Գերսեանի պատեզում, ներքին հոգեկան մատառում ների եւ ծանը ապրումների ենքակայ, ազօրոյ ՓԲԿԶՌ խօսերը՝ «Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար»: առկայն ՆԱ ԱՍՏՈՒՇՈՑ օխուրեան ապարինած, ՆՈՐԱ հոգով կազդուրուած, յաղրահառում է ԻՐ մարմենք բուլուրինած եւ սիրով տանում ԻՐ խաշը: Այս, այդ նորին է, հաւատոյ հոգին, դէպի աղջի ու եկեղեցին տուծած սիրոյ հոգին եւ կոչմանս ու պատեխի գիտակցուրեան հոգին, որ պիտի կազզուրէ նաև ԻՄ բոյլ ուժերը, զօրացնել ինչ ու պարզերես անկ ՏԻՐՈՉԱ, ԵԿԵՂԵՑՈՒՄ եւ ՀԱՅՐԵՆԻԽԹԻՆ հանդեպ:

ԻՐ մարմենք բուլուրեան յարքանակող ՓԲԿԶՌ է, որ այժմ կանգնած է աշխիս առաջ եւ հոգուս մեջ նեարդուած եւ ձայնում է՝ ՓԲԿԶՌ լուծք բաղցը է եւ ՆՈՐԱ բեռք բերեն: ՆԱ կը որ բեադրում է ապաւինել ՏԻՐԶԵՐՔԻ ԱՐԱՐՉԻ օջնուրեան, որ մօրինում է մարդկանց բախսը, որ աջակցում է բարու եւ հօմուրի յարքանակին: ՆԱ է, որ բեադրում է նաև ապաւինել նայ միասնական եկեղեցուն և ժողովրդին, յուսալ յաստա խանակալու ողեւորուրեան եւ նամեածին զործունեուրեան, վասահի նորա ողեւորի խօսերին եւ խոսուումներին, որոնց կամեով սասնենել եմ այս պատախանատու պատօսիք: Եւ վերջապէս յաւադրում է ԻՆՉ այս զիտակցուրինը թէ մենակ չիմ, այլ ունիմ լիտիկ վասահի ԱՐԱՐԱԿԻ ծները եւ վասահի աջակիցներ՝ ի դէմս ՄՐԲԱԶԱՆ ԱԲԱԶՆ ՈՐԴՆԵՐԻ եւ բարեւուրի ԱՍԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ, որոնք կոչուած են նոյն զադափարին ծառայիլու եւ նոյն պատախանառուրեան ենքակայ եւ կատարեալ վասահուրիւն են ներենչում իրենց համեածին զործունեուրեամբ, որ հաւատ եւ յոյ է առի ՄԵԶ ՄԵՐ պակաս խուռ ձեռնարկների յաջողուրեամբ:

Եղբայրական սիրոյ ողջոյն ՔԵԶ ՏԱՆ ԿԻԼԻԿԻՈՑ Կարողիկասիդ, ՏԻՐԱՒԱՆԴ. ողջոյն միաբանական ՈՒԽՏԻՆ եւ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Օրենուրիւն սիրեցեալ հօսիդ: Հոգիս երեւում է տեսնելոյ ՀԱՅ եկեղեցական ԱՐԱՐՈՒՆԵՐԻ համերաշի դիրքը եւ սիրոյ տաղկապը ՄԱՅՐ ԱԲՈՒԽ հետ, որ ՄԵՐ օրով ահեւու առաւել եւս պիտի զօրանայ, որով ազգի կողմից ուսերի բարձած բաղցը, բայց ծանը լուծք պիտի բերենայ եւ դիւրանայ կոչմանս հետ կապուած պատեխի կատարումք:

Ցաւ է ԻՆՉ, որ ՏԱՆ ԿԻԼԻԿԻՈՑ կարողիկասական ԱԲՈՒԽ գրկուած է իր պատմական տեղերից, որ այնքան հարուստ է հայ ժողովրդի կուլուրական եւ պատմական յուժաձանեներով, որոնց հետ անեակտելիուն կապուած է Կիլիկիոյ հայ ժողովուրիդը: Ասկայն միշիքարական է, որ այդ առաջի եւ աստանդական ԱԲՈՒԽ տասունում է կայուն եւ հաստատուն: Առաւել եւս ուրախ եմ, որ այդ ԱԲՈՒԽ բազմել է ՄԵՐ հոգեկից հարազան և դիրքարքը ՏԱՆ ԿԻԼԻԿԻՈՑ նուրեանարք ԳԱՄԵԴԻՆ-Ա. Կարողիկասիր, ՄԵԶ նես միասին ու գատահարակուած Ա. ԷՇՄԻԱԾՆԻ Հոգեւոր ձեմանանում: Եղանակայիւասակ ԳԵԱՐԴ Դ. ի եւ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ ազգասիրական հայրենասիրական եւ կրօնասիրական զշացմունեներով ներենչուած, նոյն զզայուն եւ ներու արտայայտուրիւնները տեսած ու վայիշած, ՄԵԶ հետ անեւու պիտի պայմար եկեղեցական եւ ազգային միասնականուրեան եւ համեածին զործունեուրեան զադափարինը կեանքի մեջ իրացնելու եւ նոյն իրաւական բնոյր տալու համար, որոնց սկիզբը դրուեցաւ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑՈՒՄ ժՈՂՈՒՄ:

Հոգով ուրախ եմ նաև, որ ՄԻՒՐԻՈՑ գաղրական, տարիւսակամ ու տանջուած հայ

ժողովրդի բեկորները յուսադրելը, մսիքարելը, զատիքարակեցն ու նոցա հոգեսկու զօտացընելը՝ Քեջ և փինակած: Մաղրում եմ ՏԻՐՈՉԸ, որ արեւատորին պարզելէ Քեջ եւ մարմնով ու նոցով զօտացնէ, որ՝ իբրև Երկրորդ ՄԱՐԱՀԸ, ՍԻՒՐԻՌՈՅ հայ ժողովուրդը ԱԼԵՏԵԱԾ Երկի առաջնորդնս, որակայի իբրև ազգ ամբողջանանք, հոգեւոր, պազալին եւ պետական կերպար ստեղծենք ի մսիքարուրիւմ համախ ԱԶԴԻ եւ ՀԱՐԵՒԱՐ դասի:

Տիրաւանդ ողջոյնս նաեւ ԶԵՋ Ամենապատի Տ. ԿԻՒՐԵՋ Պատրիարք Հայոց ԵՐՈՒԱԾԱՀԻՄ եւ ՀԱՅՐԱԿԱՆ Օրհետրիւն Միաբանական ՈՒԽԵՄԻԴ: Ս. ԵՐՈՒԱԾԱՀԻՄ Պատրիարքական ԱԹՈՈՒԾ իւ սրբազն վայերով, ուր ճնուել է աշխարհի ՓՐԿԻՉԸ, ու եղի է ՆՈՐԱ մկրտուրեան սրբազն աւազանը, ուր հնչել է ՓՐԿՉԻ աւետարանը, ուր լոււել է ՆՈՐԱ կենցանի ու կենարա հարազը՝ ՀԱՅ ԱԶԴԻ պարձաննեն եւ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՈՒ եւ նորա հօտի ՄՐԲՈՒԹԻՒՆ ՄՐԲՈՅԸ: Դեպի այդ նուրական վայերը դարձած է նաեւ համայն ժիստունեայ աօխարի աչքը:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՈՒ եւ ժիստունեայ աօխարի այդ նուրական Մրբուրիւների պահպանուրեան ու պայծառուրեան համար է, որ ՈՒԽԵՄԻ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՆ Միաբանական ՈՒԽԵՄԻԴ նես՝ որ ու զիւեր տեսում էք: Աստուածային խնամքն ու նուլանին եւ նայցում ԶԵՐ եւ ՈՒԽԵՄԻԴ վերայ, որպէսզի սրբուրեամբ զօրանաք, ժիստանեական շերմեռանուրեամբ անին եւ կենցանի օրինակ հանդիսանանք բոլոր այցելու ուխտառեներին, որպէսզի նույն պահպանուրեակ լիւն Ս.-ՖԵՂԵՐՆ ու Միաբանական հաւատով զօրացած ու վերանուած՝ դասեան իրենց վայերը: Մաղրում եմ ԲԱՄՑՐԵԱՆՆ, որ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՆ վանին իր ժառանգաւորաց զգրոցը ժիստանեական կրօնի հարողուրեան սերմեարան եւ լուսառ զան հանդիսանան ՀԱՅ Ժողովրդի համար եւ սեր կապ պահպանն Ս. ԷՇՄԻԱՆՆ իւ ՄԱՅԻ ՀԱՅՐԵՆԻՔի հետ, ինչպէս ցար:

Տիրաւանդ ողջոյնս նաեւ ԶԵՋ Ամենապատի Տ. ԳԵՂՈՐԳ Արքեպիսկոպոսու, Ցեղապան Կ. ՊՈԼՍԻ Պատրիարքական ԱԹՈՈՒՐ, Հոգեւոր ԴԱՍԻԴ եւ Նեկեղցական ՎԱՄՉՈՒԹԵԱՆԴ եւ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Օրհետրիւն հօտիք: Յառ է ՄԵՋ Նեկեղցուդ փառաւոր անցեափ եւ հօտիք բարգաւան ու բարեկեցիկ վիճակի փոխարեն՝ տեսնել այսօս փոքրացած հօտ նոցեպէս եւ ներապէս անձիխրա վիճակի մէջ: Առաւել եւս ցաւ է, որ փոքրարի հօտիք մէջ զոյուրիւն ունեն իրեւամերժ տրամադրուրիւներ, որի նետեանելով պառակուուած է ՄԵՐ սիրեկի հօտը: Միւրայ, Եերազամուրեան եւ համբերատուրեան ողին է ԶԵՐ բռնելիք ուղին հանդէա ժողովրդին. իսկ հօտիք ՄԵՐ ՀՅԱՅՐԱԿԱՆ յոշորն է՝ զեկավարուել ոսկեզիր ԵՂՄԵՀԻ կենանի իմաստուրեան վովից առած խօսերեով՝ Ձաւզուրիւն է մայր բարեաց, անցուուրիւն ծնող չարեաց: Ուսուա Ամենայն Հայոց Հայրապետուրեան Ներկայացուցիչ՝ ԶԵՋ վերայ ծանրանու և պարտականուրիւն ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՈՒ կանոններն ու Կարգերը անխարթ պահպանել եւ՝ ի պահոնչել հարկին՝ խոնհուրեամբ, իմաստուրեամբ, բայց եւ՝ նետեւելով մեր Ս. Հարերին՝ ժիստունեական ատիւրեամբ ըերսանա:

Մաղրում ենք ԱՄԵՆԱԿԱՄՈՂԻՆ պարզեւել ԶԵՋ նոցի իմաստուրեան եւ խոնհմուրեան, հօգի հանձնարոյ եւ արփուրեան, որ անդասապարտ մնաք ԱՍՏՈՒՌՈՅ, ԶԵՐ խղճի եւ ԱԶԴԻ ու ԵԿԵՂԵՑԻՈՈ առաջ:

Ողջունում էմ նաեւ ԶԵՋ հայ եկեղեցու սրբազն ԱՍՈՒՁՆՈՐԴԻՆԵՐԻՆ, որ զլուխ էք եկեղեցու եւ Տեսուշ ժողովրդին եւ՝ Տիրաւանդ պատուերի համաձամն՝ պարտաւոր էք անսա առնել եւ պապ ուսուցանելոյ՝ արգարուրեան եւ նումարտուրեան ուղիով ընթանալ, օրինակ հանդիսանալով վիճակների սրբազնուրեամբ կաղաքացուրեամբ, իմաստուրեամբ, բայց եւ՝ նետեւելով մեր Ս. Հարերին՝ ժիստունեական ատիւրեամբ ըերսանա:

Արքուն հօկողուրիւն ունեցել եկեղեցիների վերայ, որ ԱՍՈՒԻՌՈՅ տունը վայերուչ եւ բարեկարգ վիճակի մէջ լինի եւ այնեղ հնչեցրէ հաւատացեամերի ականջին ՓՐԿՉՐ կենասու և կենաւա խօսք իմիքարուրիւն եւ ի դասիքարակուրիւն: ՍԻՒՐԵՐ սրբազն ԱՄԵԶՆՈՐԴԻՆԵՐ, հաղորդարայ եւ նեզահամեր բնաւուրեան եւ կիր վարեցուրեամբ կաղեցէք ՄԵՐ տարագիր ժողովրդի սիրը ԶԵՋ հետ, սիրով վասեցէք ու աղիկապեցէք Ս. ԷՇՄԻԱՆՆ եւ մեր ՀԱՅՐԵՆԻՔի ԽՈՐՀԻՄԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ հայրենի լոււարձանների հետ ի մսիքարուրիւն եւ ի ժինուրիւն նոցա: Ցորդունեցէք ԶԵՐ հօտը կու-

սակցական պայքարներից հեռու կենալ, սոյնպէս նաև թշնամական ելոյթներից ու արտգործներից՝ մեր ՄԱՅՐ ՀԱՅԹԵՆԻՔԻ և ՀԱՅԹԱՍՏԱՆԻ եւ նօրա հարազատ ու հաւատարիմ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ հանգեղական Այլ որ կարեւուրազո՞նն է՝ քա ՄԻՒԵՍՄԱՆԻ անձնադիր նովիր եղէք ԶԵՐ հօփի, որ ԶԵՐ՝ ձամբին լսեն եւ ԶԵԶ հետեւնեն, որպէսզի յափասակիշ զայլերն անկարող լինեն փախցնել նոզա ԶԵՐ՝ փարախիզ:

Ողջօյն նաև ԶԵԶ՝ ՀԱՅ ժողովրդի Եւրկայացուցիչներիդ՝ Թեմական Պատգամաւորական ԺՈՂՈՎՐԴԻ եւ քեմական ԽՈՐՀՄՐԴԻ անդամներիդ եւ այլ պազային-եկեղեցական ՎԱՐՉՈՂԻԹԻՒՆՆԵՐԻԴ, դռւ կոչուած եւ ազգային-եկեղեցական գործերը ղեկավարելու՝ հետամուս լինելու, որ նայ մարզը՝ ՀԱՅԲՐԵՆԻԹԻ ապակայ բազակային՝ եւ նայ կինը՝ նայ մատաղ սերենի անմիջական դաստիարակիչը՝ գիտենան եւ սիրեն իրենց մայենի լեզուն, հայրենի պատմութիւնն ու գրականութիւնն. նանաչն իրենց փառապանձ նախնիքներին, տեսնեն նոցա հերոսական ու անձնուեր պայշտար ազգային անկախութեան, ազգի գոյութեան համար եւ յանուան ՔԻՒՍՈՂԻՌԻԹԵԱՆ վիճ զադափարների: Սոնմակ նաև նոցա կոլտուրական եւ կրտական նուանումները՝ գրառքեան եւ մանաւանդ գեղառուեափ ապարակներամ, որպէսզի՝ օսար երկնէի տակ, գօրեղ կուլտուրայի ազգեցուրեան ենքակայ՝ պահպանեն իրենց ազգային ինքնադիակացուրինը եւ անձոյլ մնան:

ՀԱՅՐԱԿԱՆ ողջան եւ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Օթնելորին նաև ԶԵՂ ՔԱՀԱՆԱՔԻ, ԱՍ-
ՏՈՒԽՈՅ Տաճարի պատօնեայք, դուք եք ՏԻՄՈԽ հօսի անմիջական հովիւր. ԶԵՂ են դի-
մում եկեղեցական օրքազն Խորհուրդների եւ ծեսերի կատարման համար. ԶԵՂ են հա-
ւաւագլմ իրենց սրբի զալսիները. ԶԵՂ առաջ են յաց անում իրենց բարոյական եւ Ծիր-
քական կարիքները. ԴԱՌԻՔ եք, որ անարզել ելումուտք ունեք ԶԵՂ ծիսերի սեները: Անօսի
յորգորում եմ ԶԵՂ սրբոյ եւ անքերի կատարել ԶԵՂ պատականուրիքները, որ սահմա-
նել են եկեղեցու Ս. ՀԱՅՐԵԲԸ. առանց ծովորեան կատարեցէ աւուրական ժամաս-
ցուրիւնը, երապարակային բարզուրեամբ կենակի պանեցէ հօսիդ հաւաքը եւ տրամա-
դրեցէ բարեպատասխան եւ ասուածահանոյ գործերի:

ՅԻՍՈՒԽՍԱԽԱՆԴ ողպաս եւ՝ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Օրհնութիւնս նաև ԶԵՂ Ա. Ա.ԳՐԱՎԻՇԻ
ՔԱՐԵՐԱՄՆԵՐԻԴ ԵՎ ՊԱՐԵԿՊՐԵԴԱԿԱՆ ու աստվածահանոյ հաստառութեանց ՂԵԿԱՎԱՐՆԵ-
ՐԻԴ: Յիշեցէք եւ փառք ուուէք աշխարհի բարիքների առատածեան ՊԱՐԴԵԼԱՍՈՒԻԻՆ եւ՝
ԶԵՐ դրամի, որ ԱՍՏՈՒԾՈՑ աջակցութեամբ եւ ԶԵՐ Քրեացան աշխատանիք ընօրինի եւ
վասակելի, զործ դրէք ո՞չ միայն անհատական վայելիք, այլ առաւելապես ազգի պատուի
եւ փառքի բարձրացման եւ նորա մօակոյրի զարգացման, ինչպէս նաև նորա տեսեսական
կեանիք բարելաւան համար:

Ազգի մեծութիւնը նորա ստեղծագործող ոգու եւ ալդ ոցու ստեղծած արգասիթերի արժանաւորութեանց մէջ է կայանում: Հայ ազգը անցեալում ստեղծագործել է եւ իւր ստեղծագործութեան յուշաւանեները կազմում են այսօր ՀԱՅՈՒԹԵԱՆ փառքն ու պատիւը եւ նորա բարոյական արձեն՝ օստա կուլտուրական ազգերի առաջ: Նոյնը պահանջում է նաև ներկայից, որի ստեղծագործողը՝ հայ հանճար պիտի լինի, իսկ գործի մարմնացնողը՝ հայ մեկնասար:

Բարեգործութիւնը մարդկային կեանքում մեծ զեր է խալացել, մանաւանդ փոքր ազգերի եւ յատկապես մեր կեանքում, որ աշխարհի յամեն կողմբ յամ ու ցրի ընկած ՀԱՅՈՒԹԵԱՆ բեկորներ ունենք՝ նրանք եւ հոգեւոր բազմատեսակ կարիքների ենքակայ եւ աջակցութեան հայրօք։ Ազգային մեծ բարերարներ, ԶԵՄ կատարելիք յօնակցական եւ նպատակայարժամ բաւեղործութիւնը ոչ միայն պիտի նպաստ՝ ՀԱՅ ժՈՂՈՎՐԴԻ անեսաւական կամ կարիքները հոգարով՝ ազգային իտառքի ու պատուի բարձրացման ուղին հարթելու, առառաջանահնոյ եւ կրօնական ասպարեզի բարեգործութեամբ՝ ազգապահյանման եւ ազգային միութեան գործն ապահովելու, այլ եւ ԶԵՄ նոր ձեռնարկները անհուն միխրաբութեան աղբյուր պիտի նանդիսանան նաև ՀԵ՞Զ համար, կանգնելով երկրի վերայ անջնջելի յուշաբաններ։ ԶԵՄ համարին եղբայրների սիրը շահող եւ երկնելու ՏԵՌՈՉ զուրբ առքոն։

Մեր զաղութահայութիւնը, որ պատասխում է Եւրաղիք՝ դեպի օրեցօր վերելիք

նամբով ընթացող ՀԱՅՐԵՆԻՔԸ և ՀԱՅԱՍՏԱՆԸ, մեծ պահպարեխան է կարօւամ և անհամես կարիքի տաղ է կանգնած. Վերակենդանացող հնադարեան պատմական հաստառարիւնը՝ ՀԱՅ Ժողովրդի ՄՐԲՈՒԹԻՒՆ ՄՐՊՈՑԸ Ս. ԷՇՄԻԱՌԻՆ նիւրական հիմնական բազայի է կարօւամ, որ իր ապօռուայ և ապագայի կույտուրական հաստառարիւնը՝ ՃԵՄԱՐԱՆԸ, ՏՊԱՐԱՆԸ, ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ, ԹԱՆԴԱՐԱՆԸ եւ այլ պահպանելու զարգացնել կարենայ, որոնք եղել են եւ են ԱԶԳԻ ապահով գոյուրեան հիմքերը եւ նորա փառն ու պատիւր:

ՀԱՅՐԱԿԱՆ ողջոյն եւ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Օրինուրիւն ՁԵՐ ՄԱՄՈՒՆԻ ներկայացուցիչներից, հայ ժողովրդի երաժարակային գաստիւրակներից: Ձեր պարքն է միօն վաս պահել հայ ժողովրդի հոգ մէկ այլ զավախաները, որոնք հիմնեն են կազմում ազգային ինքնազմակցութեան եւ գարգացման. բայ այսմ հարցով հայ եկեղեցու միասնականութեան, ազգային միուրեան, հայեանախուրութեան, նաև մերաշու զորութեան զավախանութեան մեր որոնք հայ լիզուի եւ նորա անցեալ պատմութեան հետ՝ միակ միջոցներն են հայ ժողովրդի անձով մնալուն: Պատականութիւն ունի հայե ՄԵՐ ներկայ ՀԱՅՐԵՆԻՔԸ և ՀԱՅԱՍՏԱՆԻ գիտութեան, գելարութեան, գրականութեան եւ տեխնիկայի վերեբ պատկերու, ոչի կենանի եւ ականատես վկաներ հանդիսացան ԱԶԳԱՅԸՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ժողովի պատգամառները: Սոյնիկա նաև այսօրուայ ամեսեն պարող հայ ժողովրդի հերոսական որին նույնու և հայաշերու, որ այսին փայլուս արայատուցան ՀԱՅՐԵՆԱԿԱՆ մեծ պատերազմամ եւ որի հեռանի, հայ ժողովրդի անցեալ փառակ ինիուրեան վերայ նոր այիս գրուցաւ: Փառք եւ պատիւ ապրան հերասներին եւ աստուածային օրինութիւն պատուի զինուածներին, որոնք մարմնով մեռած, բայց նոզով կենդանի են, որոնց հերոսութեան պատմական կրթական կամաց մեր սրբություն:

ՀԱՅՐԱԿԱՆ ողջոյն նաև ՁԵՐ հայ ՏԻԿԻՆՆԵՐ եւ ՕՐԻՈՐԴՆԵՐ կեսանի դիկավարը. միքը չէ միան, այլ եւ սիրու, եւ առաւել եւս սիրոք: Բազմարի դարեր ասինի անցել են, մարդու միտք զարգացել է, եւ մարդու ստեղծագործող մէքի եւ աշխատանակ ձեռքի հնութիւն: Արտաքի աշխատէն կատարեագործուել է, ոչի հնեւեանենով բազմատեսան հիւրական բարին բարինեն են ստեղծուել, բայց մարդու ինքը ապերշանիկ է մասցել: Խնչո՞ւ. որովհետեւ ՓՈՂԾԻ որին, սիրու և մարգասիրութեան որին չի խօսում մարդկանց սրուս:

ՀԱՅ ՏԻԿԻՆՆԵՐ եւ ՕՐԻՈՐԴՆԵՐ, զու՞ որ ասուածային զերագոյն մեռնին եւ արժանացել եւ սիրոյ և մարգասիրութեան խոցը ու ներկայ զգացմունենեավ օծուել, հանդիս եկել ՁԵՐ նոզու այդ բանեածէն զանձու, որպասի մեռն հարուս մարդը դառնայ նաև առաջ հարուս և մարգային կեսանի իշանին գոտեան:

Բոյրո դասակարգներից յեսոյ ՁԵՐ եւ զառնում, իմ սիրելի ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՀԱՅՐԱԿԱՆ ողջոյն եւ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Օրինուրիւն մեռնինով ՔԵՐ: Անցան պատմական տառապալից օրերդ, զախու են ուրախութեան եւ միսիրարութեան օրեր՝ — Միքէ միսիրարական չէ, որ դարերի յոյսեր այսոյ իրականացած եւ տեսնում ունիս սեպհական ՀԱՅՐԵՆԻՔ եւ հարազա ազգային ՊԵՏՈՒԹԻՒՆ: Միքէ միսիրարական չէ, որ զարերի բնացեում մատապէս աւերուող էնի հաղանեների եւ հարուս զիւղերի փոխարեն՝ եւ անբեկան բնամաւու արախույնող եղող եղբարյեների փոխարեն աւերակներից ու մոխութիւն յարութիւն: առնուն էնի հաղանեն ու զիւղեր եւ տեսնում, օրեցօ կոլլուրապէս յառաջդիմու եւ զագաբնակութեամբ անող, եւ կույտուրապէս հաւասար մակարգակի վերայ կանգնած: ԱՌՈՒ մեծ ազգի հաղանենի եւ զիւղերի եւ գիւղերի: Միքէ միսիրարական չէ, որ օրեցօ հայրենի երկրից վերանում է զիւղուրեան եւ անկույտուրականութիւնը, անեւանում է յետանացութիւնը, եւ նոր փոխարեն՝ բազաւուու ու զիւղուրեան գիւղուրեան ու գիւղարուեսը իր բոլոր հիւղերով: Միքէ միսիրարական չէ, որ պատու ունին անուանի զիւղականներ՝ անդամներ անունների հաւասար ծանօթ են եւրոպական զիւղական աշխատին կամ արաշանակար զերականացութեանը, հաւասար ԱՌՈՒ զերականացութեանը:

Միքէ միսիրարական չէ, երբ տեսնում ես ազգի վարած հերոսական պայքարը՝ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ժողովուրեանը շաբաթում ընկիանուր եւ իր սեպհական ՀԱՅՐԵՆԻՔի ա-

զատուքեան համար եւ բնութեան ու ստրկացման դիմ, որ աշխարհի հիացմաննենք և յուղում: Միիրէ միշտքարական չե լավ մեր քաւակների ամեն օր հերոսացող նորանոր անունները, որոնք հարսացնում են եւ վստացնում մեր ազգի հնադարեան հերոսական պատմութիւնը եւ բարձր պահում ՀԱՅ ժողովրդի պատիւք:

Մինչեւ մայրաքանչ չէ տեսնել, որ ԱՊՈՒ ժողովրդի նման մի ներս ժողովուրդ եւ ի. ՄԻՌՈՒԹԵԱՆ նման մի հօրոց եւ արգարածա ՊԵՏՈՒԹԻՒՆ անձնուիրաբար կանգնած է և պատմակա արդար գաւթ պատճանելու:

Այս, միիրաւոկան է. եւ **ՄԵՆՔ** քէ որպէս **ՊԵՏ ՀԱՅ եեղեցօնի** եւ քէ որպէս **Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ** սոսկ հազարայի, խորապէս միիրաւուած եեկ եւ վատառուն յայտարաւմ եեք քէ միիրաւուած է եաւ քէ **ՄԱՅՐ ԵՎԿՐԻ Եւ քէ ՓՈՒՐԾԻ ՀԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ:**

Մարդունք ՓԲԿՀն, որի բազմաշրջան վկայի՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՏՍԻՈՒԶԻ երաշ-
կեցած ՄԱՅՐ ԱԹՈՂ Ս. ՔՁՄԻԱԾԻՆԸ Հայ Խարթոս ծովովքի ՄՐՊՈՒԹԻՒՆ ՄՐՊՈՅ,
անսասան պահէ: Խնչգէս նաև ՏԱՆՆ ԿՈՒԿԻԿՈՅ, Ս. ԵՐՈՒՆԱՎԱՀԵՄԻ և Կ. ՊՈՂԻ ԱԹՈՂ-
ՆԵՐԸ, իրեւ հաւատոյ հաստատութեան կորողներ, որպէս հոգեւոր դասիշտակութեան
կեդրոններ եւ իրեւ ազգապահապանման սիւներ:

Ազօրենք ՏԻՄՈԽԸ, որ այցելու եւ հօվանաւոր իինի իր փաթէիկ, բայց հաւատարիմ հօսին, նայ ժողովրդին եւ նշա ազգային գիտակցութեամբ նոր զարքած հօգուն կենսու- նակութիւն եւ ստեղծագործող զօրութիւն պարզեւէ:

Ալյօբենք ԲԱՄՑՔԻ ԱԼԻՆ, որ ի՞ն ամենազօր ԱԶՀ հովանի պահե մեր նորածին ՀԱՅԻ ԵՆՔԻ մերա եւ նորա կենացի լարատե անէ:

Հայոց կողմէն առաջ գտնվել յարածութէ առաջ:

Այս Օրինաւթեան անդրանիկանոնդակը
պահպան աւարիս 1-ին 1946 թ.

Հայկական Տոմա

ԿՈԹԱԴԻԳՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵՂԱՐԳ 2.

ԿՐՈՆԱԿԱՆ

ՑԱՒԵՐԺԱԿԱՆ ՆԵՐԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Եւ առաւափկ են ըստ ձեզ եմ զամբայն աւարտ՝ մինչեւ ի կատարած աշխարհի:

(ՄԱՏ. Խ. 20)

Վերահասու ըլլալ կարենալու այս խօսքերու ճշմարտութեան, և անոնց անմիջական լրումին, ի մտի պէտք է ունենալ զանոնք՝ որոնց ուղղուեցան այս խօսքերը առաջին անգամ, երբ Յիսուս կը բաժնուէր իրեններէն և աշխարհէն, Եւ յիրաւի առաքեալները երբեք իրենց այնքան մօտ չէն զգացեր զ Յիսուս, բայց իրմէն բաժնուելէն վերջ միայն։

Առաջ, ճիշդ է, իրենց մարմական աշխերով կը տեսնէին զայն, կը վայելէին անոր ներկայութիւնը, և կը հանային անոր հրաշքներուն վրայ, Տեսած էին իր յաղթական կեցուածքը մրրկայոյդ ծովան վրայ, հանգիստես եղած էին Ղազարոսի յարութեան, և վայելած ուրիշ շատերու հետ, հացերու բազմացման հրաշքին արդիւնքը, սակայն հակառակ այս բոլորին, Յիսուսի առերեւոյթ պարտութեան աեսարանը բաւական եղաւ որ անոնք լեզապատօն փախչին, մոռցած կարծես յիշեալ բոլոր իրութիւնները։

Ի՞նչ էր ուրեմն այն զօրութիւնը, որ մինչեւ այն ատեն վախկոտ ու գոզակար այս մարդիկը գոտեպնեց ու մաքնիսացոց և մղեց բացայատօրէն քարոզելու այն գաղափարներու մասին, որ մինչեւ այն ատեն զիրենք վերապահ կը թողուը: Ի՞նչ էր այն անսակոր ու ձգողական ուժը, որ հազարաւորներ իրենց կ'առաջնորդէր, և այն հաւասարիքը, որ սիրով մահուան կը տանէր զիրենք, գողացնելով Փեսոսի և Ագրիպայի նման դատաւորները, և զարմացնելով ժամանակի հեթանոս իմաստակըները: Ուրկէ՞ այս բոլորը, իթէ ոչ այն խորունկ զգացումէն, թէ Յիսուս իրենց հետ է, թէ Ս. Հոգիին հեղումովը նորոգուած՝ անոնք իրենց մէջ կը տաճարակրէին անոր հոգին. և հաւատացած էին Տիրոջ այն խոր-

տումին թէ՝ Ես ձեզի հետ պիտի ըլլամ մինչեւ ի կատարած աշխարհի:

Քրիստոս՝ որուն յաւիտենական ներկայութիւնը կը զգան անոնք, լոկ իտէական գոյութիւն մը չէր անոնց համար, արտագրուած իրենց անցողակի յուզումներէն: Ոչ ալ մարդկային տեսակ մը գաղափարատիպ, զոր իւրաքանչիւր սերունդ ստէպ իր միտքին մէջ կը ստեղծէ, անոր փոխտալով յաճախ լեզուն իր սեպհական ներշընչումներուն և մտածումին: Եւ ոչ ալ պարզ յիշատակ մը, որուն պատկերը կ'ուրուանայ մեր մտածումին մէջ, ժամանակի մը համար միայն: Անոնց ոգեկոչած, և ըզգացած Քրիստոսը աւետարաններու կենդանի Քրիստոսն է, առանց փոփոխման և դիմաց եղծումի: Եւ նոյն կը մայ Քրիստոսը նաև ի. գործ իր աշակերտներուն համար, որոնք նոյն կերպով կը տեսնեն ու կը զգան զայն, ինչպէս առաջինները. և կրնան ըսել Ս. Պօղոսի հետ, թէկ զինք չենք ճանչնար ըստ մարմուտ, բայց կը ճանչնանք ըստ հոգւոյ, և այս վերջին հանգամանքով է որ անապրած է գարերով՝ այնքան ներշնչող և կենդանի, սերունդներու հոգին մէջ:

Թերեւ կարելի ըլլայ հերոսի մը կամ սուրբի մը համար ըսել թէ իր յիշատակովը կը խօսի մեզի, թէկ բաժնուած գարերով մեզէ: Եւ սակայն ստէկ անսահմանօրէն աւելի է Քրիստոսի ներկայութիւնը. վասն զի բառերն և պատկերներէն անզին կայ կենդանի Փրկիչը, որ կը յայտնուի սիրտերու: Այսպէս որ երբ կ'ըսենք թէ Յիսուս ներկայ է, կը գործածնենք բառը իր հոգեւ կամ հարազատ իմաստով: Այս վերջինն առումով միայն կը բարացուց Յիսուսի իրական ներկայութիւնը, և այս ներկայութիւնն է որ Ան խոստացած է իրեններուն և իր նեկանցիցներին: Իրողութեան այս հանգամանքին մէջ պէտք է փնտուել գաղտնիքը անոնց, որոնք Յիսուսի իրական ներկայութեամբ երաշխատորուած հրաշքներ գործեցին, և ասոր հակառակ իրողութեան մէջ կը կայանայ գժբախտութիւնը անոնց՝ որոնք միայն իր անունին կառչած կը վրիպին իրենց գերին մէջ:

Նկատեցէք զ Յիսուս իրք անհատ մը միայն, մին անոնցմէ զորս մարգիկային պատմութիւնը մեծ բառով կը տիտղոս և այն ատեն ինք ուրիշ բան պիտի չերեկի մեզի,

բայց միայն իրեք պատկեր մը կամ յիշատակ մը, որ մեզի պիտի բերէ մեռած ժամանակի մը յուշքերն ու հրահանգութիւնները միայն:

Ի մտի ռևնեցէք ընդհակառակն Ս. Դրական Յիսուսը, այինքն աշխարհի Փրկչէը, և դուք պիտի զգաք ի՞ն ներկայութիւնը և պիտի հաւատաք ի՞ր սիրոյն. վասնի այս անգամ ի՞ր և մեր միջն գոյաւորուած կապը այլևս լոկ յիշատակ մը պիտի չըլլայ, այլ հաջորդակցութիւնն մը, և նախասիրուած ժամագրութիւն մը զոր ան պիտի պայմանաւորէ մեր հոգիներուն։ Այն ատեն միայն հնարաւոր կ'ըլլայ ըմբռնել աշխարհի Փըրկիլը ի՞ր յայտնութիւններով, ի՞ր սիրոյ առաքեալի հանգամանքով, և կրոսրաւծ՝ ոչխարիրուուն նկատամամբ ի՞ր ուսեցած բարի հոգուի հոգածութեամբ և ի խնամքով, այն ատեն մեր մասին ըստաւածները լոկ այլարանութիւններ չեն լինին, այլ իրականութիւն մէք որ ի՞ր ճշմարտութեան հաւաստիքը պիտի խառնէ, մեր կեանքին, և մեզի հետ պիտի ըլլայ մինչև ճակատագրական այն օրը, երբ զի՞նք պիտի կարենանք տեսնել այլևս եթիւ առ երես, համաձայն ի՞ր խոստումին։

Ճիշդ է թէ առաքեալները, իրեք հաւաստիքմ հրեաներ, պաշտած էին իրենց հայրերու Աստուածը, որ իրական ու ճշմարիտ էր իրենց համար, ծունդ զրած էին Տաճարին մէջ լսած էին իրենց Վարդապետը Կափառաւայումի սինորուկին մէջ, և երազած իրեն հետ միասին Փալիլոյ լճակին կազուց ջուրերուն առջև։ Անոնք գիտական կերպ կԱստուած, բայց չէին կրցած զգալ Անոր իրականութիւնը։ Հացերուն հրաշքը, ջուրին գինիի փոխուիլը, կոյրին բժշկութիւնը, բոլոր ասոնք կը զգացնէին Աստուածոյ մերձաւորութիւնը, կը տաքնային Անոր հպումէն, կը պայծառանային Անոր աստուածային պատկերով։ Սակայն այդ բոլորը այլեւս անուշ յիշատակներ կը մատին այն գժնդակ օրէն ի վեր երբ Ցուգան Գերթսամանի առաջնորդեց զինուորները։ Բայց Յարութեան ու մանաւանդ Համբարձման հրաշալի իրողութիւններէն վերջ, Խորհուրդը՝ Մեծվայելչութեամբը զոր անոնք ըզգացեր էին երեամն, զարձեալ ետ կուզար, իրենց մէջ յաւերժօրէն մնալու համար։

Համբարձումը վերջին և լրացեալ րեեսը

եղաւ Յիսուսի երկնայնացման, և Զիթենեաց լեռը՝ կամրջակէտը երկրի և երկնքի և եաները՝ նոր չէր որ տեսարանները պիտի դառնալին մեծ կրողութիւններու, կրօններու պատմութեան մէջ անոնք Աստուածոյ մօտենալու, երկնայնանալու աննդուղներ են։ Սինա և Թորէ Հին Ուխտի մէջ, Հեմալյան և Զեմաւեստան աշխարհը երկնքին մերձեցնող կատարներ եղած են։ Այսուաւագութեան մէջ անոնք Աստուածոյ մօտենալու, երկնայնանալու աննդուղներ են։ Սինա և Թորէ Հին Ուխտի մէջ, Հեմալյան և Զեմաւեստան աշխարհը երկնքին մէջ։ Դիշտը ընդհակառակն իսազազութեան և չափարութեան զգացումով կը տոգորէ։

Լիաներու այս խորհուրդին նշանակութիւնն ու գերը կ'երևի Յիսուսի կեանքին մէջ։ Քրիստոնէութիւնը լեռներուն լրաց կը յայտադրէ և կ'իրագործէ մեր կրօնին և անոր կիսազգին Աստուածային կողմը։ Քը բիստակէութիւնը կարելի է ըսել կը յայտարարուի երանութեան լեռնէն, վասնզի և երանիները Տաննաբաննեան կը կազմեն նոր կրօնին և թագաւորութեան։ Նոր է ձայնը որ կը հնչէ այդ բարձունքէն, արժէ քները տախտակը յեղաշրջող աստուածային պատգամը, օրէնքին տեղ ոգեկան տասնաբաննեան։ Ինչ փոյթ երան Փիզիք փոքրութիւնը, յաւիտենական արժէ քներ հոն խօսուեցան։

Թարո՛ այլակերպութեան լեռը, երկրորդ գագաթն է Յիսուսի երկնայնացման, աստուածայինին մատուցումը մարդոց, աշակերտութիւնը երանի տուին այդ վայրկեանին և բնաւ չմոռցան այդ պահը։ Այլակերպութիւնը մը հրաշալի երկեոյթ մը չէ լոկ, այլ մարդուն պայծառակերպութիւնը, որը ութեան գերազոյն կարելիութիւնը։ Գողգոթան, ուրիշ լեռ մը, ուր մէկ կողմէն կ'երեսի մարդկութիւնը ի՞ր բոլոր ողբերգութեամբ, արեան պատկերով, և աստուածութիւնը Յարութեան հրաշալի տեսարանով։ Լիաներու վրայ տեսարանուած այս եղելութիւնները աշխարհի մէջ իրագործելի կարելիութիւններու գեղեցիկ հեռապատկերները կը բանան մեր աչքերուն և հոգիին։ Խոչ Համբարձումը վերջնականօրէն յաւիտենականութիւնը կը բանայ մեզի, երկինք մտնելու և յաւիտեան ապրելու ապահովութիւնը Ենովքով և եղիայով մտատեսուած

Ժարդկային երազն է որ Կ'իրականանայ՝ Երկինքը այլևս իրականութիւն մըն է մեղի համար, որովհետեւ մեր Տիրոջ մարդկութիւնը կը բնակի հոն, փառաւոր որովհետեւ իր մեծութիւնն է հոն, սիրելի՝ որովհետեւ իր սէրն է հոն, սէրը որ լիցուց իր երկրային կեանքը, կարելի ըրաւ իր հաշքները և խաչին տեսարանի, և ու սէրը որ միշտ իրական պիտի ընէ իր ներկայութիւնը մեր մէջ և կարելիութիւնը մեր իրեն հետ ըլլալուն։ Ամպը որ ցսու Աւետարանի բացարութեան ծածկեց վինքը աշխարհն, սույգ ֆասան է Անոր գոյութեան, և այդ ամպը աւելի քան լուսաւոր է իրեն հաւատութող բոլոր հոգիներուն համար։ Խոկ մէջ ինչպէս պէտք է մեր կեանքը հանդերձուի ի հաշին յաւետնականին, լեռան քարոզը սանցուին է այդ վերելքին սրուն վերջին սատիճանը կը հանգչի Համբարձման իրականութեան։ և Հոգիսկ աղքատութիւնը որ կուշա կ'ընէ մեր հոգիի ու մարմի աշքը աշխարհի բարիքներէն, բայց մասնաւանդ չարիքներուն դիմաց, աշեղութիւնը որ զգալ կուտայ մեզի մեր փոքրութիւնը և կարելի կ'ընէ բանալու համար զմեզ ասքարծույնին ու ստորագասին հաւասարապին, և խաղաղութեան ճաւագայթը ունի միշտ իր հոգիին մէջ և իր աշքին զիմաց։ Համբարձումը կը սկսի խոնարհութեան զգացումէն։ Երանութեան լեռը իր խօնարհումին մէջ և հեզ հոգին իր ինքնաճանալումին մէջ աւելի բարձր են քան բոլոր բարձրութիւնները կարելի աշխարհներու։

Ամէն մարդ որ մեր աշխարհի կեանքէն կ'անցնի, պիտի ունենայ իր երանութեան չեաը, Ալլահերգութեան պահը, Պողոթան, և Համբարձումը, այսինքն իր օրէնքը, իր սրբութիւնը, իր տառապանքն ու յաթթանակը, և մուտքը իր փառքին, երկնքին մէջ։ Եւ այս բոլորը այն առեն միաայն, երբ մենք ունենանք իր յաւերժական ներկայութիւնը, և երկրի վրայ կեցած կարենանք զգալ երկինքը մեր մէջ։

b. v. s.

Վ Ս Ա Զ Ե Լ Ի Ո Ւ Ր Ա Խ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե

Ուրախութիւնը Քրիստոնէութեան յատուկ հոգեվիճակ մըն է։ Ոչ թէ որովհետեւ Քրիստոնէութիւնը ինքնարկեար կը չնչէ ամէն ցաւ ՝ ցած ենք արիկա արդէն — այլ որովհետեւ ան կը որպիկցնէ մեզ տառապանքին գերը, զայն կրելու կերպը, մեղի տառվզ օրինակը մեր տառապագ Տիրոջ։ Տակաւին, զրական մըն է կը բերէ ան մեղի, մշտական հանդարտութեան ուսոր խաղաղութեան մէջ պահելով զմէզ։ Անոր համար է որ ընդմիշտ պաշտպանուած ու զօրացած ենք Աստուծով՝ այսինքն անհնուրին յստակածես, բարի և կորովի հօրմը նոփանիով։

Անարդար ենք Աստուծոյ հանդէպ։ Զայն կը նկատենք խստագատ վերահսկի մը, որ կը լրտեսէ մեզ, ունենալու համար հանույթը՝ առաւել կամ նուազ անգութ պատրժներ սահմանելու, մարնակրկիս կերպով հաշուրած սակագինի մը համաձայն։ Եւ կամ, զայն կը ներկայացնենք իրեն վաճառական մը, որ անհոգորէն երկնքի երջանկութիւնը կը ծախէ մեզի, արտաքին կարգ ըլ ծէսերու փիլարէն։ Առաւետր ըլլար կարծես։ Տօւր՝ որ առնես։ Այս քան կը գնարես, փիխարէն այլաքանի իրաւունք կ'ունենաս։ Եւ սակայն իրուգութիւնը այս պէս չէ ամենինին։ Աստուծած ոչչի թիսապարտպանորդ մըն է, և ոչ ալ մեքենական շնորհ հարաշին մը։ Կրօնքը էսապէս պատագին բարեկամութիւն է։ Աստուծած կը սիրէ զմեզ, և իր խսնգաղատանքով, իր մշտարթուն հսկողութեամբ, իր խնամքով կը պահպանէ զմէզ։ Տիրուողիանոս սահմանել կարծած է զԱն, ըսելով։ — անչ ոք Հայր է Աստուծոյ շափու։ Ասկայն Աստուծած ինքն իսկ ըսած էր արդէն Ա. Դիրքի մէջ, թէ իր սէրը մօր մը սէրէն ալ զօրաւոր էր։ Շնորհիսկ մայր մը եթէ իր զաւակը լքէ, ես պիտի չլքեմ զձեզ երբեք։ Ու կը յիշէք մեր Տիրոջ խօսքը։ «Քանիցս անգամ կամնցայ ժաղովել զձեզ չուրչ զինն, զոր օրինակ ժողովէ հաւ զազս իւր ընդ թեսովք իւրովք»։ Անհուն վստահութեան բացարձակ ապահովութեան այն զգացումը զօր մանուկը ունի բազուկներուն մէջը իր մօրկան, մեծագոյն երջանկութիւնն է քրիստոնէին։

Այդ երջանկութիւնը յառած կ լուծայ ճըշմարտութիւննէ մը, ինչպէս ծաղիկը իր ծզօտէն։ Ասա այդ հիմնական ճշմարտութիւնը։ — Աստուած քաղիք է, զմեզ կը սկիբէ, մենք պարտինք բացարձակապէս վստահիլ իրեն մեզի անհրաժեշտ բաներուն համար, Բացարտինք։ Եւ թէ ինչո՞ւ վստահ ենք տառը այդպէս ըլլալուն։

Աստուած, ազատորէն, հայրաբար, պիտի տայ մեզի ինչ որ օգտակար է մեզի համար, ի՞նչ լսել է այս։ — Անդօթք մը բաշւակա՞ն է, անխուսափելիօրէն ձեռք բրելու համար հարստութիւն, յաջողութիւն և առողջութիւն։ Անչուշու ոչ։ Աստուած կը լսէ երբեմն մեր այս կարգի ինդրանքները բայց ոչ միշտ։ Այլ, երբ օգտակար է ատիկա մեր հոգիին համար։ Մանօթ էք փոքրիկն Մարի Անտրէի պատմութեան՝ Հայք Ֆինարտիի կողմէ, Նօթըր-Տամի Մայր Տաճարին մէջ պատմուած։ Մարի Անտրէն որ Պելճիքայի մէջ՝ Մօնսի մօտերը մեռաւ, ծնած էր Ծուեյ, լուրջ 1846-ին։ Եօթք տարեկան էր երբ լսեց բացարտութիւն մեր Ֆիրոջ խօսքերուն։ «Չոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէշ յանոն իմ՝ տացէ ձեզ» (Յովհ. ԺԵ. 10)։ Նոյն քաղաքին մէջ վիճակահանութիւն մը ծնանցուած էր ի նպաստ աղքատներու։ Խօժէնի կայսրուհին ալ մեծարձեք պարզեւ՝ արձաթեայ ատաներկու դըգալ և պատառաքաղ զրկած էր։ Աղջնակը տոմսակ մը զնեց, և սկսաւ աղօթել, առանց որ և է մէկուն իմաց տալու, վախնաւով որ ուրիշ մը գուցէ իրմէշ աւելի աղօթէ։ Ու ամէն իրիկուն կ'ըսէր Աստուածոյ, ԱՅխուուի անուննիվ, մեծարձեք պարզեւը կը խնդրեմ քեզմէ։ Դուն խոստացեր իր ընդունիլ այսպէս աղօթողներուն աղերսանքը, Ուրիշն առանց առեն որ ուրիշ մը ինձմէշ աւելի չաղօթեր։ Վիճակի օրը կը հասնի։ Պատիկը, մեծ մօրը պատշնորդութեամբ քաղաքապետարան կ'երթայ, բոլորովին խաղաղ հոգիով, իր յաջողութեանը մասին ապահով։ Կը ծանուցուի թէ նախ մեծարձեք պարզեւը պիտի քաշուի։ Պատիկ Մարին խսկոյն ոտքի կ'ելլէ, և տոմսակը ձեռքը կը յառաջնանա։ Ներկաները կը սկսին խնդրաւ, Պատիկը առանց խոռվելու, կը շարունակէ իր ճամրան, և թէն կը հասնի, երբ վիճակը իրապէս ալ իրեն էր ելած։ Ան բացագան-

չեց։ Ակստահօրէն գիտէի թէ պէտք է շահէր։ Աղօթած էր ես։ Աւելի ուշ, իշեն լով այս իրողութիւնը, կ'ըսէր թէ Աստուած այդպէս էր անօրինած, անկասկած, մասնուկ իր սրտին մէջ խարսխելու համար ունակութիւնը և զգացումը վստահութեան։ Այս մեծարձեք պարզեց, հետեաբար, օգտակար էր եղած իր հոգիին Բայց չի եւանակիր երբեք, թէ Աստուած միշտ այսպէս պիտի ընէ, մրցումներուն մէջ իր ուզածին շահէլ տալով, և մեզ աւելորդ ձանձրոյթէ աղատ պահելով։ Ընտանիքի մը մէջ որովհետև պատուական ծնողներ կան, այդ չի նշանակեր որ զաւակը պիտի երբեք չակընկալէ իր ծնողքէն իրեն վիշտ պատճառող ուեէ որոշում։ Ինչ որ կրնայ և պարտի ըսկէ, սա է միայն, թէ իր հայրը և իր մայրը շարունակ իր սույոյ օգուտներէն լաւագոյնին կը խորհին։ Թէ իսկ հարկադրուին վըշտացնել զայն։ Զոր օրինակ պիտի բաժնը անկէ, որպէսզի ան երթայ բարձրագոյն աւուումներու հետևելու և լւ կամ պիտի սաստեն ու յանդիմանեն զայն, իր թերութիւնները ուղղելու համար։ Եւ կամ, տակաւին, իր առողջութեանը սիրոյն, պիտի պարտաւորին զինք համակերպիլ անխմբրժարմանումի մը, կամ ենթարկուիլ ցաւազին գործողութեան մը։ Ու ասիկ մասնաւ իսկ է իրենց խորունկ, ուշիմ, հօգածու սիրուն հանդէս իրենց զաւկին։ Ի՞ր բարիքին համար՝ իրեն, և ոչ թէ իրենց հաճոյքին համար՝ իրենց ըլլալիք։

Աստուած զմեզ այս կերպով է որ կը սիրէ։ Ան կը փափաքի մեզ իրական, անվախճան, կատարեալ երջանկութիւնը։ Ու լաւագոյն միջոցներ ձեռք կ'առնէ պատրաստելու համար ատիկա։ Բայց գուռք այն միւս տեսակի օժանդակութիւնը կը խնդրէ իրմէ։ Ու ատոր հետևանքը։ Զեր հոգին, ձեր հաւատքը պիտի չտառապէր ատկէ։ Որոշ ժամերու պիտի ջնմանէիք պարտիկ աղջնակին, որ տեսդ ունեցող իր ընկերունին ջերմութեան աստիճանը բարձրանալուն վրայ մարդոց ահարեկումը տեսնելով, այսպէս կ'աղօթէր Սրբուհի Թերէզային։ Փոքրիկ քոյր թէրէզ, թող անոր լերմը մինչև զերո իշնէ...։ Եւ կը խորհիք թէ Սրբուհին հանցացաւ ընդունիլ այս աղօթքը։ Աստուած ևս նոյնպէս կը գարուի, երբ մեզի համար մասաբեր խնդրանքները ընենք իրմէ։

ինչ է ուրեմն իմաստը մեր Տիրոջ խօս-
քերուն. «Անդրեցէք և տացի ձեզ, բաղ-
խցէք և բացցի ձեզ. զոր ինչ խնդրիցէք
ի Հօրէ իմմէշ յանուն իմ՝ տացէ ձեզ»: Գի-
տէք արդէն, հաւատացիալ եղբայրներ, թէ
այդ խօսքով ըստել կ'ուղղուի. — մեր աղօթ-
քը միշտ կը լսուի, երբ խնդրենք այն՝ որ
մեզի համար իրական բարիք մը, և մեր
փրկութեան գործին օգտակար պիտի ըլլայ:
այսինքն օգնութիւն՝ մեր փորձութիւննե-
րուն մէջ, Ներում՝ այն յանցանքներուն,
զորս կը զդանք, կորով՝ մեր պարտակա-
նութիւնը լրացնելու, չնորո՞ւ որ կը լուսա-
ւորէ մեր միտքը, և կը զօրացնէ մեր կամ-
քը: Ուրիշ խօսքով, որքան ատեն որ լաւ
ձամբէն կը յառաջանանք, ապահով կրնանք
ըլլալ Աստուծոյ մասին մեր վստահութեան:
Անիկա մեր ընթացքին կ'ընդդիմանայ, մի-
այն երբ մոլորինք. և ասիկա մեծազոյն ու-
ժանդակութիւնն է որ կրնայ տալ մեզի:

Արդ, կընա՞նք վստահ ըլլալ թէ, ոյն պայմաններով (զորս ճշշեցինք) աստուածային օժանդակութիւնը պիտի չըլլացուի մեղի: Որքան բազմաթիւ, ոյնքան զօրաւոր պատառաներ ունինք վստահելու ատորն Ահասասիկ մի քանին: Ամէնչէն առաջ, ոնչն ինքն այս նպատակը որ քր Աստուած ի մտիւ ունեցած է զմեր ստեղծելով: Եւ յտուի կեանքը, որ զմեր փիլութեան առաջնորդութեալ համար արուած է մեղի: Ի՞նչպէս կ'ուրգէք որ Ան չէնտաքքը արդիւնքով: Անիկա պիտի զլանար մեզի օգնութեան հասնիլ, եթէ անգիտանար մեր նեղութիւնները. (սակայն նա որ ամենագէտ է, մեզմէ աւելի լաւ կը ճանչնայ այդ բոլորը): Եւ կամ, եթէ իրեն պակսէր միջոցը մեզի օժանդակելու. (և սակայն Անիկա ամենաշարող է): Եւ կամ, ի վերջոյ եթէ մենք անկարեւոր համարուէինք եթէ աշքին: Բայց չէ՞ որ մեր ինչ որ մեզ կը ըլլապատէ, ամէն ինչ որ կը տեսնենք, մոռնդները որոնցմով կը անանինք, ոգը զոր կը չնչինք: Այս բոլորը Անկէ արուած շղթայ մըն է ընծանարուն, ու ամրող աշխարհէ՛ կենդանի վը կա՞ն, քերթուած ծը մեր հանդէպ ունեցած իր սիրոյն: Նա որ իր որդին է զոհած մեզի համար, Նա որ Մարգեղութեան, Փրկագրծութեան ամիմանալի խորհուրդն է անօրինած, նուաստացումներով մոռքին, չար-

չարանքովը խաչի կերպեթին, երկնքի ճամբան բան բանալու համար մեզի այդ բոլորով, ինչպէս կ'ուղէք որ կանգ առնէ մէկէն, փոխէ իր գաղափարը, լէտ զմիզ, երբ պէտք ունինք մենք իրեն, Այս ատեն ևսուուած պիտի ըլլար էակ մը՝ յիմարօրէն կամապաշտ : Բայց հայնոյութիւնն է ասիկա, վասն զի անոր կը զլացուի վատահելիութիւնը :

Ասոնցը անզին կայ տակաւին անոր
խստումը, զոր քիչ տուած կը յիշենք.
և Խնդրեցէք և տացի ձեզո՞ւ Եւ կայ Եկեղե-
ցին որս վարդապետութիւնը, ամբողջ ա-
ւանդութեան մը վրայ հիմուած, զոր Աս-
տեծոյ օգնութեանը կը համարինք Փորձե-
ցէք մատնովդ ջուր քաշել ջրիորէն Քանի
որ կաթիլ միայն պիտի կարենաք վրե հա-
մբ ։ Գաւաթ մը առէք, այն ատեն աւելի
պիտի հանէք. Խոկ գոյլով՝ ա'լ աւելի, և
այսպէս աստիճանաբարու ։ Եթէ Աստուծու
ներկայանաք անձկալից անվստահութենէն,
տիրութենէն ընկնեած սիրով, կաթիլ առ
կաթիլ միայն պիտի ընդունիք չնորից. Մինչ-
դեռ անգամ մը որ բանագ ձեր հոգին, ու
չկասկածիք անոր գորպանքին իրականու-
թեանը, այն ատեն պիտի ողողուիք լոյսով
և ներքին կորպով։

Կան անտարակոյս, երկշուռ ու մտատանձ հոգիներ որպէսք ամէնք բանի մէջ վախը միայն կը խորչին: Թթերևս անկրաժեշտութիւն մըն է ասիկաւ: Եւ սակայն հարկ է լաւ ձանչնալ զայն: Վախը չընդգիմանար ո՛չ սիրոյն և ոչ ալ վստահութեան: Ան կը լրացընէ և կը պաշտպանէ զանոնք: Կարելի չափով պէտք է վախնալ և խուսափի մեր բոլոր ներքին օւժերէն, և անկէ՛ որ զմեզ պիտի հեռացնէր Աստուծմէ: — այսինքն մեղքէն: Զաւան մը որքան աւելի սիրէ իր մայր, անքան աւելի վախը ունի զայն ապերջանիկ դարձնելու: Քրիստոնեայ մը որքան աւելի սիրէ իր Աստուծը, այնքան աւելի կը հեռանայ չափքէն: Եւ այս պահն նկէ զօրացնէ իր սէրը և կը զդուշացնէ զինք անկումէ, Եւ եթէ մեր կամքը Բուլղար զանքն, և փորձութիւնը տակաւ տագնապեցուցի զառնայ, շատ բանաւոր է որ, աներկմիտորդն, Աստուծոյ բազուկներուն մէջ նետենք մենք զմեզ ։ Մանուկը իր վախցած ժամանակն է որ դէպի իր մայրը կը վազէ: Եւ այս զգացումը այնքան գելեցիկ է Հ. Կառուսու, իր

«Իւրաքանչիւր ժամու աղօթքը» անուն խորհրդածութեանց գրքին մէջ. — «Երբ, անդունդներու երկայնքին, սեպացեալ ճամբաներու վրայ զիսու պտոյտէ բռնուած զգանք ինքզինքնիս, այն ատեն կը կառչինք երան ցցունքներուն, պարեխներուն, և մեր տկարութեան ամբողջ կորովով կը միենք մեր եղունգները անոնց ծեցպերուն մէջ: Երկիւղը, հետեւարար, վստահութիւն յառաջ կը բերէ:

Սիրելիներ, չէ՞ք զգար թէ, անկեղծութիւն մը եթէ զնէինք մեզմէ մեր ապրած իրականութեան մէջ, կեանքը պիտի փոխէր իր գոյնը, իր լոյսը՝ եթէ կ'ուզէք: Կը գտնուինք ձեռքերուն մէջ անձի մը որ միանգամայն շատ բարի, ամէն ինչի խիստ տեղեակ, և իրերուն ու մարդերուն վրայ յոյժ ազգեցի է: Անձ մը որ մեր փրկութիւնը կը ցանկայ, և ամէն ինչ ըստ այնմ կը կարգաւորէ առաջնորդելու համար զմեզ հոն: Ով որ լաւ հասկցեր է այս իրողութիւնը, անիկա անմիջապէս խաղաղութեան մէջ կը հաստատուի: Նման անո՞ր՝ որ ահաւոր փոփորիկէ մը տատանեալ, ցամաք կը հանի: Ու հասնելուն՝ ազտած է ա՞լ, եւ ինքինքը փրկուած ու ամրողովին հանդարտած կը գտնէ, որովհետեւ իր ոտքքը հաստատուն գետինի մը, ապառաժի մը վրայ են այլէս, զերթ՝ անստուգութեան ալիքներէն: Թող փրձութիւնները և յարձակութերը ոռնան մեր շուրջը: Եթէ Աստուած մեզի հետ է, մեր ըոլոր թշնամինը զլթայուած շուներու նման անզօր պիտի ըլլան:

Պիտի փափաքէի զձեզ տեսնել վստահութեան վիճակի մէջ, ձեր տագնապները մոցցած, մէկ կողմէ ձգած, իրքն թէ տաք սենեակ մը մտած ըլլայիք, ուր կը հանենք մեր գրայի ծանր վերարկուն:

Մտատանջ, խռոված, վշտահար հաւատացեալ մը նման է այն. տղուն, փոքրիկն նօթին, որուն պատմութիւնը կ'ընէ Տիկին Լուսի Ֆէլիքսովոր Կուայօ, իր գիրքերէն մէկուն մէջ: Այս պղտիկը, իր արձակուրդը ծովափին վրայ է անցուցեր, չափազանց հրավուրութելով ալ բնութեան տեսարանէն: Տուն վերադառնալուն, մայրիկն քով խաղաց ատեն, կ'իմացնէ թէ պտաւելու պիտի երթայ ծովեզը խարակներուն վրայ: Ու սեղանի մը ներքե կ'ան-

յայտանայ, կը փակէ իր աշքերը, կրկին տեսնելու համար ծովը, ապառաժները, Եւ մանուկներու յատուկ երեւակայութեամբ մը, այնքան գեղեցիկ կերպով կը վերակազմէ նոյն պատկերը, նոյն ձեօրը, որ ինքզինք իրապէս առանձին կը զգայ անհունութեան դիմաց: Ու երկիւզէն բռնուած կը սկսի հեծ կտալ: Կուլայ՝ ամրողովին առածին մեր մայրը սենեակին մէջն է: Ուս պիտի թօթուէք վատին դիմաց այս տղեկին: Բայց մեր բոլորին ունեցածն ալ նոյն է: Կ'ափս սոսութեած մեր յուսաւումը, և սակայն արդէն սկսկ Աստուածը բազուկներուն մէջն էք: Վեր. Հ. կիպէրմանը իր մէկ նամակին մէջ կը գրէ: «Որքան մոլորած և զգացումէ գատարկուած ենք: Կոյըը ինքզինք կը վուտակի չնիկի մը, որ զինք կ'առաջնորդէ ամէն տեղ՝ ուր որ ուզէ: Բայց մենք, առաւել ևս կոյրեր, ունենալով հանգերձ այսպիսի մեծ, յստակատես, գիտառատ առաջնորդ մը, չենք ուզեր մեր հոգիներուն առաջնորդութիւնը յանձնել անոր: Գոռնէյլի մէկ հերոսը կ'ըսէր. օլրէ պարտականութիւնդ, և մանցեալը աստուածներուն ձգէն: Բանաձևը հեթանոսական է, որովհետեւ հեթանու մըն է որ կը խօսի — ծեր Ալքատիսը: Բայց մտածումը ինքննիւն էութիւնն իսկ է քրիստոնէութեան: Ընել իր կարկին, և յետոյ խաղաղորէն սպասել Աստուածոյ միջամտութեան, որ չի խարեր մեզ: Աըրութեան տանող լաւագոյն ճամբան է այս, քանի որ ամբողջական ընդունելութիւնն է Աստուածոյ կամքին՝ մեր նսին վրայ:

Լաւ գիտեմ թէ աստուածային այս կամքը քիլ մը երկիւզալի, վախ ազդող է: Օր մը հետեւեալ խօսակցութիւնը լսեցի քրիստոնէի մը և քահանայի մը միջնէ.

— Ես կը վախնամ, կ'ըսէր առաջնը, Աստուածոյ ինձի գրկելիք նեղութիւններէն:

— Սակայն անհունորէն բարի է Անիկա:

կը պատասխանէ քահանան:

— Այո՛, բայց խստապահնջ է Ան, իմ բարիքս կը ցանկայ, բայց ինքզինքին թոյլ չի տար աղայանքներէս ողքուելու: Ան պիտի փրէ զիս, առանց նկատի առնելու ներկայ վիշտու:

— Դուն վԱստուած կը նկատես, ըստ քահանան, անփափկանկատ, վարուելակերպ չունեցող, իմացեականութենէք զուրկ ման-

կավարժ մը, մին' քեզ մը կարճամիս այն ազնուասիրտ մարդերէն, որոնք գերացա- կան սկզբունքներ կը փորձարկեն մանուկ- ներու վրայ, առանց հաշուի առնելու իրենց պատճառած ցաւերը: Եւ որոնք, առանց ուզելու, այնքան անգութ կը դառնան, հակառակ իրենց ունեցած ողջամիտ դի- տումներուն: Աստուած լաւ կը ճանչնայ քեզ: Ինք է քեզ ստեղծած: Ան շատ լաւ գիտէ թէ ինչ բան կինանք կրել, կասնդի, աշխարհ գալով, Ան կրեց ամէնէն ծանր վիշտը զոր ոչ մէկ մարդ կրած է երբեք: Յիսուսի սիրոը, մարդկային սիրուերէն ա- մէնէն քնքոյը, ամէնէն դիրահանդորդն է: Կը կարծէք թէ Ան՝ Մարգարեալ Աստուա- ծը, որ իր գիրկը կ'առնէր մանուկները, անձանօթ է քնքոչութեան: Կը խորհիք թէ Ան՝ Կ'անդիտանայ ներողամտութիւնը, Ան՝ որ մասնաւոր գուրգուրանք ցոյց կու տար մեղաւորներու հանդէպ: Կը արծէք թէ անկարո՞ղ է Ան ընդհանուր աւերած մը՝ վերակազմելու, Ան՝ որ ստեղծողն է ծաղիկներուն, անտառներուն, թիթեռնե- կին, արևին. Ան՝ որ պատշաճ առիթին ցոյց կուտայ մեզի ժայտը իր գէմքին, ինչպէս Կ'ընէ ժամապաշտական աղօթք մը: Կը խորհիք թէ ձեր մօրմէն նուռազ գորովոս է նա ձեզի հանդէպ: Նա՝ որ ստեղծած է սիրոը մայրերուն: Ինչո՞ւ համար ինքինք- նիդ չէք յանձներ Անոր, առանց խստացնե- լու ձեր սիրոը, առանց կամակըրութեան: Ու տակաւին ոչ միայն համակերպութեամբ, այլ եւ վասարաւթեամբ, երախտագիտու- թեամբ, սիրով: Պէտք է հարցնէք զուք ձեզի ամէն օր: — վասա՞հ եմ աղոթօք թէ յուսահատեցնող տիրութիւնը վատառողջ է և վասակար: Թէ՛ անիկա երեսոյին ունի երբեմն, չար ծառային պէս ըսկելու Աստու- ծոյ: Դուն խիստ, անպարա ես, բնաւ չենք կրնար քեզ գոհացնեն...: Սրդոք մտա- ծե՞ր եմ ես, թէ՛ նոյնիսկ ծանր յանցանքէ մը ետք, զջջալով հանգերձ զայն, բացար- ձակ վասահութիւնը, ներուելու ստուգու- թիւնն է որ մեծագոյն հաճոյքը կը պատ- ճառէ Աստուծոյ: Զի՞՞ որ մարկ եմ ըրած մեր Տէրը: Ու Ան կ'ըսէ միշտ Աւետարանին մէջէն — «ես եմ... մի՛ երկնչիր...»: խաղաղութիւն ընդ քեզ...»:

Թրգմ. ԹԱՄ

ԿՐՈՆԱՊԱՏՄԱԿԱՆ

ԶԱՐՉԱՐԱՆԱՑ ԳԻՇԵՐԸ

ԱՆՆԱ ԵՒ ԿԱՅԻԱՓԱՅ ՔԱՅԱՆԱՅՄԵՏԱՑ

ԱՊԱՐԱՆԱՑ ՄԷԶ

Պետրոսի Երեխ ուրացումները Կայիա- փայի ապարանին մէջ: — Առաջին կարծի- քը որու համաժայն Պետրոսի երեք ուրա- ցումները Կայիափայի ապարանքին մէջ տեղի ունեցած են, Կ'առարկուի Ս. Յովկ- Հաննէսի այն հաստուածով, ուր կը պատ- մուի թէ՛ Աննայի ապարանքին մէջ է տեղի տնեցած առաջին ուրացումը, առաջին հար- ցաքնութեան ժամանակ, անկէց վերջն է որ Յիսուս դէպի Կայիափայի ապարանքը կը տարուի:

Երեխ ուրացումները Աննայի ապարան- ին մէջ: — Լատին եկեղեցւոյ նշանաւոր Հայրապետաներէն Օգոստինոս (354—430) այս պարագան ամեննէն չէ յիշած, և Ս. Յովկաննէսի պատմուածքին վրայ հիմուե- լով, ընդունած է անոր ճշգրտութիւնը և ասով Աննայի ապարանքին մէջ կը դնէ ա- ռաջին ուրացումը ինչպէս յաջորդ երկու ուրացումները:

Առաջին ուրացման գալով, զժուարու- թիւն մը չկայ, քանի որ, Ս. Յովկաննէսի կողմէն պատմուած է: Աննա քանիանայա- պետ հարցաքննութենէն վերջն էր որ Յի- սուսը Կայիափայ քանիանայապետին զրկեց: Բայց Եղիսաննէսի պատմուածքը ցոյց կու տայ թէ՛, Յիսուս Կայիափայի ապարանքին մէջ կը գտնաւի, ինչպէս ուրբթն յնոտյ կա- տարուած ուրացումները կրնան Աննայի ա- պարանքին մէջ տեղի ունեցած ըլլալ: Հատ Օգոստինոս հայրապետին, ուրացումներու պատմուածքը, որ Համարարքան Աւետա- րաններու մէջ հարցաքննութենէն վերջ տեղի ունեցած ըլլալը կը շետուի, յետա- կայեաց պատմուածք մըն է...».

«Աւետարանները, Կ'ըսէ ան, վերստին իրենց պատմուածքին Կ'անդրագառնան, Պետրոսի ուրացումը պատմելու համար: Գալով Ս. Յովկաննէսի, ան կը վերապատմէ

Պետքոսի փորձութիւննը և անոր ուրացումը այն ապարանքին մէջ, ուր առաջնորդուած էր»։ այսինքն՝ Աննայի ապարանքին մէջ, ուր՝ բոլոր ուրացումները տեղի ունեցան։ Ալլօմանտ մեկնարանը որ Միթոսի բարեկամ է, իր ուսումնասիրութեանց մէջ կը ջանայ հաստատել թէ, ըստ Համատեսսականներու, Պետքոսի երեք ուրացումները կայիշափայի ապարանքին մէջ տեղի ունեցած են։

Իրեն մտիկ ընենք. «Նախ և առաջ, ըստ
Ս. Յովհաննու պատմուած քին, առաջին
ուրացումը Աննայի ապարանքին մէջ տեղի
ունեցած է... իսկ միւս երկու քը հարցա-
քնութեան ժամանակ Կայիշափայի ապա-
րանքին մէջ, քանի որ, Աւետարանին պատ-
մածին համաձայն, Յիսուս յետոյ է որ Կա-
յիշափայի ապարանքը տարբուցաւ» (25, 27):

Սակայն նոյնիսկ Ս. Յովհաննէսի պատմուած քին մէջ շփոթութիւն մը կայ, քանի որ առաջին ուրացումն և միւս երկու ուրացումներուն մէջ առարկեր տեղեր նշանակուածն են: Առաջին ուրացումնէն զերս, որ Աննայի ապարանքին մէջ տեղի ունեցած էր, ըստու է որ սպասաւորները կրակ վառած էին և Կային անդ ծառայցքն և սպասաւորք, խարոյիկ արկեալ՝ քանզի ցուրտ էր, և ջեռութիւն կայր ընդ նոսա և Պետքոս և ջեռույթ (ԺԷ. 18):

Աւետարանիլը տեղի առաջ երթագով, երկրորդ և երրորդ ուրացումներու ժամանակ, նոյն բառերը կը գործածէ ։ ԱԵ Սիմոնի Պետրոս կայր. անդ և ջեռույցք Վերելիչուած տողերէն Աւետարանիլը բան մը կ'ուզէ հասկցնել, թէ՝ երկրորդ և երրորդ ուրացումները կրակի մը շուրջը տեղի ունեցած են, ըստ այս ենթագրութեան թէ առաջին ուրացումը Աննայի ապարանքին մէջ տեղի ունեցած էր :

Նրկու ու բացումները Աննայի և Կայիշա-
փայի ապարանաց մէջ. — Այս վարկածը
որ սմանց կողմէ առաջ կը բրոսի, այն է
թէ, առաջին ուրացումը Աննայի, իսկ առ
ըստքը Կայիշափայի ապարան քին մէջ սեղի
ունեցած են, շատ համոզիչ չեն թուրա-
լլաւ. անոնք կը պնդեն թէ՝ առաջին ուրա-
ցումը 13րդ համարէն վիրջը գրուած է, ուր
կ'ըստու թէ՝ Եթուու Աննայի քովը առաջ-
նորդուեցաւ և սեղափոխութիւն մը կ'առա-
ջարկեն իրենց թէզին ի պաշտպանութիւն։

Սակայն կը մնայ բացատրել ամէն աւ-
նոնց, որոնք ուրացում մը Աննայի տպա-
րանքին մէջ և երկու ուրացումներ Կայիս-
րայի ապարանքին մէջ ըլլալը կը պնդեն,
թէ ինչո՞ւ Համատեսականներուն մէջ, ե-
րեք ուրացումներուն Կայիսրափայի ապա-
րանքին մէջ Կատարուած ըլլալուն մասին
ու եւ է բացատրութիւն մը չի տրուիք Հ.
Պուրասսէ, իր կոմէն քննեով ուրացում-
ներու պատմութիւնը, փոխանակ երեք քի-

չըսի կը բարձրացնէ ուրացումներու թիւը։
Աննայի եւ Կայխափայի ապարանաց
նոյնացումը բակով մը, ուր՝ Պետրոսի երեք
ուրացումները տեղի ունեցան. — Հոս' նո-
րէն կարելի է ասկէց առաջ Հ. Օլիվիէլին
կողմէ յայտնուած ենթագրութիւնը յիշել
Թէ Աննայի ապարանքն Կայխափայի ա-
պարանքին մօտն էր աւելցնելով նաև թէ
և ոյնիսկ մէկը միւսին մաս կը կազմէր։
ինչպէս որ պէտքնէն հեղինակաւոր մէկնիշ-
ները կը կարծեն. Ահաւասիկ Պր. Ֆուար-
տի կարծիքը. «Անոնք՝ հարաւակողմի գըո-
ներն մէկն մէշէն անցնելով այն ապա-
րանքն հասան, ուր՝ երկու քահապանայա-
պետներ կը բնակէին. Հաւանաքար երկու
քահանայապետները նոյն ապարանքին եր-
կու թէերուն մէջ կը բնակէն, այնպէս որ,
Պիտու Աննայէն Կայխափայի առաջնորդուե-
լու համար, բակէ մը անցաւ, որ երկուքին
բնակութիւնները իրարմէ կը բաժնէր. Պր.
Քամուս՝ կ'աւելցնէ ըլաւագոյն միջոցն է
յայտնել թէ՝ Պետրոս Տէրը ուրացաւ Աննայի
եւ Կայխափայի հարցաքննութեանց ժամա-
նակն. Ուրիշ մը կ'ենթագրէ և կ'ըսէ Պետ-
րոս, երբ Պիտուը առաջինէն երկրորդին
առջև առաջնորդուեցաւ, հարցաքննութեան
ժամանակ, նոյն կրակին առջևը կեցած էր ։
Վերջապէս Պր. Ֆուարտ կը կարծէ հա-
ւատալ թէ Վերջին Աւատարանին համա-

ձայն, երեք ուրացումները Աննայի ապա-
րանքին մէջ տեղի ունեցան, իսկ միւսնե-
րուն համաձայն, Կայլափայի ապարան քին
մէջ: Հետևաբար՝ երկու ապարանքները մէկ
էին և Ս. Թովհաննէսի 25րդ համարը նկատի
ունենալով, թիսուսը առաջին յարկաբաժիշ-
նէն կայլափայի յարկաբաժինը առաջնոր-
դեցին:

Ասով ընդունուած կ'ըլլայ Աննայի և
Կայիսրական ապարանքներուն նոյնութիւ-
նը, միակ առարկութիւնը կը մնայ աւան-

դութիւնը, զոր վերև յիշեցինք թէ՝ Անհայր ապարանքը Մին լերան հրսութը կը գտնուէք, կեղոնական մասին մէջ, իսկ աւելի հարա Կայխափայի ապարանքը կը գնէք:

Իսկ Հ. Օլլվիէն իր կողմէն պատրաստուած յատակագծին մէջ, իր մըջին եզր մը, երկար զուգանեռուած մը պատրաստած է, երկու վայրերը ներս առնելով: Ան մէկ կողմէն ընակութեանց նոյնացումը, պատմուած քններու համաձայնութեան համար անհրաժեշտ կը նկատէ, միւս կողմէն՝ աւանդութիւնը մերժելու կը վախճայ, որ երկու որոշ բնակութիւններ ցոյց կուտայ, մին Անհայր և միւսը Կայխափայի համար:

4.- Եթե աւրացամթերեն իւրաքանչիւրին մանրամասն նկարագրութիւնը. — Առաջն օւրացումը, եթէ երբեք նկատի ունենանք Զերորդ Աւետարանէն (ԺԲ. 16-17) պատմուած քը, տեղի ունեցաւ մեծ քահանայապետին ապարանքէն դուրս Սակայն Համատեսական միւս երեք Աւետարաններուն համաձայն, ուրացումը տեղի ունեցաւ երբ Պետրոս խարոյկին (Մատթ. Ի.Զ. 58-59, Մարկ. ԺԴ. 67, Ղուկ. Ի.Բ. 56) քով կը տաքնար: Սակայն եւ այնպէս, կարելի է համաձայնութեան եզր մը գտնել չորս Աւետարանները միասին քննելով:

Հոյ, առ ի լուսաբանութիւն, կարգ մը մեկնիներու կողմէն կատարուած ուսումնասիրութիւններէն մէջերութեան կը գնենք. Պր. Պոլիէ-Լարիէն կը գրէ. «Թոյկաննէս գրան պահպանութիւն ընդող աղախինին խօսելով, Պետրոսը ներս մտցուց: Այս կինը, Պետրոսը տեսնելով որ իր առջէէն կ'անցնէր, անոր ըսաւ, զուն ալ այդ մարդուն աշակերտը չե՞ս միթէ: Պետրոս այս հարցումին ի պատասխան բոլորդին այլայլեցաւ եւ ներառ ո՛չ պատասխանեց:» Հոյ, ուրեմն, ուրացումը դրան առջեք կատարուած է: Խոկ Պր. Թուասոսէ կը գրէ. «Բակին մէջ ցուրտ ըլլալով, հոն կրակ վառած էին, եւ Պետրոս ուրիշներու հետ միասին կը տաքնար: Սպասուիններէն մին, որ Պետրոսը ներս մտցուցած էր, երբ տեսաւ որ Պետրոս կրակին առջեւ նստած էր, ուշադրութեամբ անոր յայելէն վերջ, ըսաւ, զուն ալ Թալլիփացին հետ էիր, սակայն Պետրոս բոլորին առջև ուրացաւու: Ուստի, հոյ, առաջին ուրացումը ո՛չ թէ դրան մօս, այդ բակին մէջ, կրակին մօս տեղի ունեցած

է: Օլլվիէն անակ Պր. Թուարտի կարծիքը այս մասին. «Առաջինը ուրացումը, տեղի ունեցած էր այն ատեն երբ աղախինը Պետրոսը ներս մտցուց, և իր խօսքը անոր ուղղեց և արագապէս անցաւ: Բայց, կրակին քով, աղախինը Պետրոսը նորէն տեսնելով, Պետրոս ուրացաւ և խումբէն բաժնուեցաւ: Հոյ, կը դիտուի թէ, ուրացումը արդէն դրան քովը սկսած էր, բայց բուն ուրացումը կրակին քովը կատարուած էր: Կարծեն թէ, առաջին ուրացումը, երկու անգամ տեղի ունեցած է:»

Հ. Օլլվիէն վերի բացատրութիւնը ընդունելով հանդերձ, հետևեալ կերպով կը բացատրէ եղելութիւնը. «Պետրոս, Յովհաննէսը միջոցաւ ներս մտնելէն վերջ, աղախինը՝ Պետրոսի անցնելու ատեն անոր ըսաւ, ովք մարդ, զուն ալ այդ մարդուն աշակերտը չե՞ս, Պետրոս հապենապի պատասխանէ:» Այս կը գնելով վերջ, Պետրոս կրակին քով գնաց հոն նստելու համար: Աղախին մը, որ այդ միջոցին բակէն կ'անցնէր զայն գարեթեալ հարցագննեց և Պետրոս իր պաղարիւնութիւնը չկորսնցնելով՝ ըսաւ, և Զեմ գիտերթէ, ի՞նչ ըսել կ'ուզես, ես զայն չեմ ճանչնար ըսի արդէնո: Այս խօսքին վրայ, աղախինը խուզարկու ակնարկով մը կրկնեց նորէն. «Բայց, այս՝ զուն ալ անոնցմէն ես: Որուն Պետրոս փութաց պատասխանէլ, ովք մարդ, ե՛ս անոնցմէ չեմո: Ուստի, կրնանք ըսել թէ, առաջին ուրացումը առնուազն երեք ձևերով պատմուած է: Առաջինը՝ դրան հով, երկրորդը՝ կրակին հով, և երրորդը՝ մաս մը դրան քով, մաս մը կրակին քով: Երկրորդը ուրացան գալէն առաջ, Աւետարաննական պատմուած քնները իւրաբու հետ ներգալնակելու համար, կարգ մը ենթադրութիւններ կը արուին Պետրոսը արդարացնելու համար. «Թերեւս Պետրոսը շրջապատէն աղդուած էր», ճանչնուելու վախը ունէր, «Ճարցումներէն շփոթահարու, ուզեց աշեռանալ մութ անկիւն մը պահութելու համար»:

Իսկ ըստ Հ. Վեղրոնի Պետրոս, կ'ուզէր Յիսուսին մատենալ, տեսնելու համար թէ՝ ի՞նչ պիտի ընէին Տիրողը: Պր. Մարթէնի համաձայն Պետրոս, կրակին քովէն հեռանելէն վերջ, բակէն զուրս մեկնեցաւ, սակայն ապարանքին մօտ տեղ մը ըսպա-

սեցաւ Խոկ ըստ այլոց «Պետրոս բակէն գուրս երթալէն վերջ, գաւիթէն անցաւ և գնացաւ Այս բանը տեղի ունեցաւ այն ատեն, երբ աքաղաղը առաջին անգամ ըլլաւով կանչեց, ինչպէս որ Ս. Մարկոս և միւսները կը պատմեն: Խոկ Պր. Գամուռի համաձայն, «Աքաղաղին կանչը իրեն յիշեցուց Տիրոջ գուշակութեամբ՝ պարագան և իր հոգին խոսկեցաւ»:

Երկրորդ ուրացումը մը ուր տեղի ունեցաւ Այս ալ՝ ինչպէս առաջին ուրացման պարագային, երեք ձեւերով պատմուած է:

1. Կրակին քովզ, գեռ գաւիթը չհասած:
2. Դրան քովզ, և 3. Կրակին քովզ մօտենալուն:

Արբայ Մարթէն այսպէս կը պատճառաբանէ. «Պետրոս տեսնելով որ, նորէն ուրիշ աղախինի մը կողմէն ճանչցուած է, որպէսզի ինորոյ կասկածի մը չենթարկուի, այս կնշան ամբաստանութեան վրայ, աւելի վստահութիւն մը տալու համար փորձեց ինքինքը արդարացնելու: Խոկ Հ. Օլիվիէն կ'ըսէ. «Պետրոս կուակելով որ իր կ'ցցած տեղը առաջինէն աւելի վտանգաւոր է, կրակին քովզ մօտեցաւ, յուսալով որ ծառաները և պահակները ուշադրութիւն պիտի ընէին, արդարացնելու համար զինքը»:

Հ. Տիտոն կ'ըսէ. «Պետրոս տեսնելով որ, աղախինը զինքը ճանչցաւ, վերստին կրակին քովզ մօտեցաւ, հոն գտնուողներուն մօտ կասկածի չենթարկուելու համար»:

Երկրորդ ուրացումը, շատերու կողմէն կրակին քովզ կատարուած է կ'ըսուի: Խոկ գալով երրորդ ուրացման, բոլորին կողմէն առանց տարբերութեան պատմուած է:

Հուկաս Աւետարանչին համաձայն, երկրորդ և երրորդ ուրացումներուն միջև մօտ մէկ ժամ միջոց մը կայ.

Ե Զ Բ Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Ի Ւ Ն

Տեսանք թէ, կարգ մը մեկնէներ Ս. Յովհաննէսը և Համատեսական Աւետարանները իրարու հետ համաձայնենելու համար, Աննա և Կայիհափայ քահանայապետաց ապարանաց նոյնացումը կամ անոնց իրարու կից գտնուիլը յայտնած էին: Սակայն և այնպէս, այս վարկածը զօրաւոր կիմ մը չունենալով, պէտք է ուրիշ տեղ մը փնտռել համաձայնութիւնը: Մարկոս Աւետարանչին, մ՛դ. գլխուն մէջ յիշուած

էտերը ուշադրութեամբ պէտք է քննենք և Եւ Պետրոս երթայր զհետ նորա՝ մինչև իներքս խոկ ի գաւիթը քահանայապետին» (54), «Եւ Պետրոս մինչդեռ էր ի խոնարհ ի գաւիթին» (66), «Եւ իրեն ել յարտաքին գաւիթն, և հաւ խօսեցաւ» (68):

Ս. Յովհաննու Աւետարանին համաձայն (Ժ. 15-18), առաջին ուրացումը Աննա քահանայապետի ապարանքին մէջ տեղի ունեցած էր և հոս Ս. Մարկոս Աւետարաննին յիշածը դիւրութեամբ կը լուսաբանուի «Եւ իրեն ել յարտաքին գաւիթն», ուրեմն՝ Պետրոս Աննայի ապարանքին գուրս ելաւ, և երբ Յիսուսը Կայիհափայի ապարանքը տարին, Պետրոս հոն ներս մտաւ, ուր երկրորդ և երրորդ ուրացումները տեղի ունեցաւ:

Պալով Համատեսականներուն, նկատելով որ անոնք Բրէկին Աննայի առջև առաջին հարցաքննութեան մասին չեն խօսած, բնականաբար Պետրոսի առաջին ուրացումը չէին կրնար յիշել:

Հ. Օլիվիէն ի նպաստ իր պաշտպանած թէզին փաստ մը կը գտնէ, ըսելով թէ, Հայերը իրաւունք ունին իրենց համեմնի այն աւանդութեան մէջ, որով իրենց վանքը (Ս. Հրեշտակապետաց) եղած էր Աննա քահանայապետին ապարանքը: Ուրեմն կը տեսնուի թէ, Աւետարաններու բնագիրները Երուսալիմանութեան հետ կատարելապես համաձայնութեան մէջ կը գտնուին, թէ Աննայի ապարանքը եւ Կայիհափայի ապարանքը ուրիշ տեսներ եին, ոչ թէ իրացու կից, այլ ուր հետարութեամբ մը իրարկ բաժնուած եին:

Ուսափ, առաջին հարցաքննութենը և ուրացումը Սիրոն իրան կիւսիսակողմը գտանուող Աննա քահանայապետին ապարանքին մէջ տեղի ունեցաւ, որ մեկուսի չէնք մըն էր: Խոկ երկրորդ և երրորդ ուրացումները, մըն հարցաքննութենէն առաջ, միւսը հարցաքննութենէն վերջը, Կայիհափայ քահանայապետին ապարանքին մէջ տեղի ունեցան:

Ամփոփեց

ՊԱՐԴԵԼ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

ԹԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ

ԵՐԲ ԵՍ ՄԵՌՆԻՄ

Երբ ես մեռնիմ, ով սիրեցեալ,
Վըրաս տրում մի երգեր դուն.
Ո՞չ վարդենի զլխուս վերեն,
Եւ ոչ նոնի տնկէ ուրեով:
Միայն կանաչ ըլլայ վըրաս,
Թաց՝ միւս ցողէն ու անձրեւէն.
Ու յիշէ զիս, եթէ կամիս,
Կամ զիս մոռցիր, եթէ կրնա:

Ես ո՞չ ուրեն պիտի տեսնեմ,
Ո՞չ անձրեւի իյնալն ըզգամ,
Եւ ոչ լսեմ սոխակին ձայն
Ու վեշին մէջ պիս՝ եղերգէ:
Այլ ընդմէջէն եռազ-այզին,
Ու չունի ծագ կամ արեւմար,
Դուցէ յիշել ժեզ կարենամ,
Գուցէ յիշելն իսկ մոռանամ:

Թրմ. Շ. - Մ. CHRISTINA ROSSETTI

Հ Խ Ն Հ Հ Ա Ր

Այս ընթանուր խորագրին տակ պիտի ներկայացնենի միջնադարեան այլ եւ այլ տաղեր, հանուած Ա. Արոնոր Զեռագրեներեն: Այս տաղերու հրատարակութեանց կամ թեատրանց յենք հանդիպուած են և անուան ենք թերի օրինակներ միայն: Միջնադարեան հայ գրականութեան ճայինագոյն մարզերեն մեկը կազմող տաղասացութեան բաժիննեն վայ կատարիիք մեր յաւելումները կը կարծեն որ պիտի ունենան որոշ արժեք:

Սկզբն ներկայ թիւով կուտանի անառուն տաղ մը Գարնան վայ, որ սիրուն նկարագրութիւն մըն է: Ռւշագրաւ է անձանօր տաղասացին այն կարծիքը թէ նախամարդուն դրախտի մէջ կարծ պատրի եր խաղողը: Հաս իրեն եր Աղամ կերւ զայն, դրախտին դուռը փակուեցաւ, վայց կրկին խաղողը բացաւ մարդոց առջեւ դրախտին դուռը Յիսուս Քրիստոսի շնորհի:

Այս տաղը կը գտնոի թ. 615 Զեռագրին մէջ, որ գրուած է 1592 թուին: Մի բանի տեղ կան յայտնի խանգարումներ, կը բողոքն աղածին պէս:

Տ Ա Ղ Գ Ա Ր Ն Ա Ն

Ո.Ժ. անսկիզբն եւ անսահման,
Անսանելի եւ անքարգման.
Զգարուն արար հանց պատուական
Նըման դրախտին Եղեմական:
Մառք եւ գրախ կանչեցան
Մրգաց պատով զարդարեցան.
Աղբերակունքն որդորեցան
Ծով եւ գետեր ի զնաց եղան:
Չորտոսանիք առողացան
Ի զոմ երամ զարկին ու ելան,
Կողեն ըրդայիշն կու խաղան,
Խաղլով զեղողին ի շուրջ կու գան,
Միւրոյ տէրնին կու նոխանան
Վերայքսւին հային ու երան,
Աղջկունքն զվարսն կու դեղեն
Ճեմին բայլեն և ի հետ ցեծան:
Հաւերգ ամէն ուրախացան
Եւ ի իւրեանց զադարքն եկան,
Ծիծուունքն եկին եւ բուն դրին,
Խաղմոս ասցին զտուն ի լրման:
Եհանահամ ու ըրզեցան
Ղումրին ունի յոյժ բաղցըր ձայն,
Գիտեն բարող, զանձեր ու տաղ
Մեղեղիք ու շատ շարական:
Արագին եւ սազն ու բաղն
Եւ մաւրաւըն ուրախացան.
Պլառունին փափաքանօֆ
Ի վարդենին բաւակեցան:
Շուշան կանաչ մուրս ու մարախն
Ու մանուշակըն մէկ դարձան,
Գնացին վարդին երկրպագին,
Զսեղան? ունիթին իւրեանց յալամ:
Այն նարկըզին հոտքն բուրեաց
Խաչխաչըն բաք պանունեցան,
Նունուժարն ի շրէն ի զուրս
Դեղին կանաչ երեւեցան:

Համապիտոն ի մէջ ծաղկանց*
Որ մարդ ասի իմաստութեան,
Եռաց երկիր եւ կակղացան
Բիւրք ի բիւրց ծաղկունք քուսան:
Դաւեւրգ ամէն ծաղկօֆ լրցան
Որ ի հոտուն մարդիկ ցնծան.
Կակղացան ծառոց ոսփիւնքն
Մէկ հետ մէկի մրցունք հասան:
Թուրքն առաջեաց բան ըգիալւան,
Կեւասն աղեղ էր ի նման,
Միւսմիւն ի ծառն ըդեղնեցան
Խնծորընին կարմրեցան:
Մրցունքն ըցանծըն խոտեցին
Մինչ հասանէ կայր անսասան.
Ընկուզն յունապն ու կաստանայն
Նուսն ու մենտուզն բաղցրացան:
Նուռն ալ երաց զիազար ակուսն,
Ամպրաւն ի ծառըն կախուեցան.
Սերկեւիլըն դրդնեցան,
Դեղձն ի ծառին բուցաւ անկաւ:
Նարինն բռուինց լլյեմնենքն այ՝
Եւ զարդմօրգուն բաւկին բանայ.
Թէ այդ հեծել տէր որ անցաւ,
Կուզ? խաղըզըն գովական:
Զի սայ եհան զմեզ ի դրախտէն,
Ցորժամ եկեր զասայ Ադամ,
Փակեցաւ դուռըն դրախտին,
Կրկին խաղոյն երաց մարդկան:
Տէր մեր Յիսոս Քրիսոս զզինին
Առաքելոցն ի վերնատան,
Ասէ, առէք արբէք յուսով,
Սայ է արիւն իմ փրկական:
Ըսգայական եւ բուսական
Եւ Աստուծոյ որդիք մարդկան,
Ամենենեան ի մի բերան
Օրհնեն զանեղ բանն էական:

Հրատ. Ն. Վ. ՇՈՎԱԿԱՆ

ԶԵԿՈՅՑ ԵՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ա.ՄԵՆ. ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ՈՒՂԵՌՈՒԹԵԱՆ

Խ ՍՈՒՐԲ ԷջՄատիւն

Հայաստանի կրօնական և եկեղեցական կեանքի վերակենդանութիւնը որ այնչափ հրաշափառապէս երեւան եկաւ էջմիածնի մէջ, կը տեսնուի նաեւ երեւանի Ս. Սարգիս և Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներու կաթուղիկէներուն տակ: Ս. Սարգիսը որ առաջնորդանիստ եկեղեցին եղած է միշտ, նորոգուած տեսանք ամբողջութեամբ ներքուստ և արտաքուստ Աւագ խորոնի խաչկալը, և աւագ դասի կաթողիկոսական գահը ուշագրութիւն գրաւեցին իրենց վայելչութեամբ: Եկեղեցւոյ գմբէթին ջորս կամարները եւ անձոց անկիւնները, գասի կամարները ծաղկուած էին հայկական գեղարուեստական ճաշակով: Անկիւններուն մէշտեղերը զետեղուած էին նաեւ չորս աւետարանիչներու իւղաներկ նոր պատկերներ: Զախակողմենս պահարանը ուխտաւեղին վերածուած էր Ս. Սարգիս եւ Տէրունական մեծաղիր իւղաներկ պատկերներով: Անոնց առջեւ կային պղնձեայ աշտանակիներ ուխտաւորներու մոմերու համար:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայկական ոնոգ միջակ մեծութեամբ եկեղեցի մըն է գեղեցիկ զանգակատառնով: Հոն տեսանք ինչ որ ուրիշ տեղ չէինք տեսած — մկրտութեան աւազանի երկու կողմերուն վրայ կախուած էին հայկական արական եւ իգական յատուկ անուններու ցանկեր: Մկրտութեան Արբազան Խորհուրդին հեա միացած անուններու այն խորհուրդը նշանակալից էր անտարակոյս:

Բացի երեւանի եօթը քահանաներէն Ս. էջմիածնի մէջ հանդիպեցանք հետեւել քահանաներուն, որոնք պաշտօն կը կատարէին զանգական տեղեր.

Վարդգէս Քնյա, Գրիգորէան, Վարդան Քնյա, Միթթար Ա. Քնյա, Դարբինեան, Համազասապ Քնյա, Դարբակէան, Վահան Ա. Քնյա, Թաւարպէկեան, Մկրտիչ Քնյա, Չորչոփեան, Յուսիկ Քնյա, Զիհանկիւթեան, Վոյկաննէ Քնյա, Տէր Սարգիսէան, Խաչատուր Քնյա, Նազարէթեան, Ինսաւալիս Քնյա, Մղվաչեան, Սարգիս Քնյա, Պարուէեան, Սահակ Ա. Քնյա, Տէր Սահակէան, Արգար Քնյա, Արբահամեան, Գէորգ Քնյա, Յակոբ Քնյա, Խոսրով Քնյա, Միթթարէան, Յուսիկ Խաչ Քնյա, Տէր Սատուածարէեան, Նահապետ Քնյա, Մուրատեան, Սահակ Քնյա, Խաչատուրէան, Աշոտ Քնյա, Տէր Յովհաննէսեան, Խաչատուր Քնյա, Ապտամարէան:

Մայրաքաղաքի զանազան մասերուն մէջ ուրախութեամբ դիտեցինք ժողովուրդի լրջութիւնն ու ազնիւ վերաբերմունքը, Նոյնը նկատած էին միւս պատգամաւրիները, օքերայի, թատրոնի և կինոներու մէջ: Տարակոյս չկայ թէ այս գեղեցիկ և յուսազրիչ երեսյթը առաւելապէս արդինքն է այն զատիքարակութեան՝ որ կրթութիւնն և մշակոյթը կը բրեն ժողովուրդին: Երեւանի օքերայի և թատրոններուն ներկայացումներու մասին ֆքթ: Ճուղընի տուած վկասութիւնը նշանակալից էր: Երբ հարցուցինք իր առաւելութիւնը, խորոնէ զգացումով յատարաց: Զափազանց գոհ եմ, որովհետեւ մէկը կրնայ իր ընտանիքի բոլոր անդամներուն հեա միասին օքերա եւ թատրոն երթալ, առանց գայթակեցնելու անոնցմէ որ եւ մէկուն աչքը և միտքը:

Մեծ գեր անին նաեւ այն բարեկարգութիւնները՝ որոնք հետակետ ներմուծուած են ընկերային օրէնքներու մէջ: Ամեւսնական օրէնքներ արուած մեծ կարերութիւնը, օժանդակած է ընտանեկան սրբութեան պահպանման: Բնտանիքի պաշտպանութեան համար սահմանաւուծ օրէնքները՝ մեծ կարերութիւն տուած են ընտանեկան կեանքին

և մանուկներու ու պատանիներու և երիտասարդներու ֆիզիքական և մտաւոր զարգացման համար աշխատող կազմակերպութիւններուն։ Հայ գիւղացին պահպանած է իր աւանդական նկարագիրը, աշխատասէր, հիւրասէր, ընտանեսէր ու հայրենասէր է, իր եկեղեցին ու հաւատքին կապուած։ Այս բոլորին վրայ աւելցած են այն բարիքները որ քաղաքակրթութեան և գիտութեան ազդակներէն կը ծնի։

Յուլիս 18-ին, Ն. Ս. Օծութիւն Վեհափառ Կաթողիկոսին ներկայացանք, հրաժեշտ տալու և առնելու իր օրնութիւնները։ Ն. Ս. Օծութինը այս առթիւ ևս յայտնեց իր խորունկ սէրը Երուսաղէմի Առաքելական Աթոռին եւ Սրբոց Յակոբեանց Պատ. Միաբանութեան հանդէպ։ Յանձնարարեց մեզ որ իր օրնութիւնները նուիրենք նաեւ Պաղեստինի Բարձր Գոմիսէրին, Երուսաղէմի Կառավարչին եւ մեր պատրիարքական թեմի մէջ գտնուող մերազնէից։

Տաճար մտնելով՝ մեր վերջին ուխտը կատարեցինք իջման Աեղանի առջև և մեկնեցանք Երեւան՝ քառասնօրեայ միաբանական կեանքի անուշ յիշատակներով։



Վեհ. Տ. Գարեգին Ա. Կարողիկոս Տաճի Կիլիկիոյ
Ամենա Ս. Կիւրեղ Բ. Պատրիարք եւ Գր. Ռ. Խայեան

Յուլիս 19-20, Երեւանի ինթուրիստ պանդոկը մասցինք ճամբորդութեան կարգադրութեանց համար, իսկ 20-ին, յետ-միջօրէի, Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին և միւս տասը պատգամաւորներու հետ օդակայան վոխադրուեցանք և տեղաւորուելով արամագրուած օգանաւէին մէջ մեկնեցանք գէպի Պագու, սակայն մեքենայի խանջարման պատճառու, 25 վայրկեան յետոյ վերադանանք օդակայան, և անկէ ինթուրիստ պանդոկ, ուր գէշերելէ վերջ, յաջորդ օր՝ Նարաթ, ճամբայ ելանք ու այս անգամ ապահով Պագու

հասանք ե իջանք օդակայան։ Մաքսատան գործողութիւնները լրանալէ յետոյ տեղաւորուեցանք զարձեալ օդանաւախն մէջ և ճամբայ ելանք դէպի թէկրան, ուր հասանք երեկոյեան ժամը 5-ին։ Թէկրանի Առհրդային օդակայայնն մէջ պատգամաւորներս զիմաւորեցին տեղւոյն քահանայից դասը և ազգային մարմիններու ներկայացուցիչները, և առաջնորդեցին մեր բնակարանները։ Յաջորդ օր՝ Կիրակի, բոլորն ներկայ գտնուեցանք Ս. Պատարագին որ կը մատուցուէր վարժարանի մատուցին մէջ։

Այդ օր տեղեկացանք թէ Տիար Ռոման Սայայեան իր խոստման համաձայն, իր կառուցած եկեղեցւոյ թերի մասները յաջողած էր լրացնել և միայն ներքին յարդարման համար պէտք էին մի քանի օրեր ևս։ Պրշուեցաւ օծումը կատարել Յուլիս 29-ին, Կիրակի օր։ Յուլիս 26-ին, Տքթ. Աղյօտանի նախապէտ ըրած կարգադրութեան համաձայն Իրանի Վեհ. Եակնչակը հաճութիւն ունեցաւ ընդունելու Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը, մեզ, Գեր. Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Մելիքթաննկեանը և Գեր. Տ. Վահան Եպոս. Կոստանեանը Նորին Վեհափառութեան յանձնեցինք Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի օրնութեան կոնդակը՝ Ընդունելութիւնը տևեց 50 վայրկեան։ Մեկնեցանք Նորին Վեհափառութեան վեհանձն ներկայութենէն երախտապարտ զգացումներով և խորունկ հացումով։ Յուլիս 28-ի երեկոյեան, Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը և մենք կա-



Գեր. Տ. Ներսէս Արքեպոս. Մելիքթաննկեան, Վեհ. Տ. Գարեգին Կաք. Տանն Կիլիկիոյ, Ամեն. Տ. Կիւրեղ Բ. Ս. Պատրիարք եւ Գեր. Տ. Վահան Նպա. Կոստանեան։

տարեցինք եկեղեցւոյ գոնրացէքի արարողութիւնը մասնակցութեամբ Գերաշնորհ Տ. Ներսէս, Տ. Եփրեմ և Տ. Վահան Սրբազնաններու Խոկ յաջորդ օրը՝ Յուլիս 29-ին, Կիրակի, կատարեցինք օծման արարողութիւնը Ս. Պատարագի միջոցին։ Պատարագից և քարոզեց Գերաշնորհ Տ. Ներսէս Սրբազնը, որ եօթը տարի առաջ հիմնարկեք կատարած էր Սրբազնութեան կը մասնակցէին Գեր. Տ. Եփրեմ և Տ. Վահան Սրբազնանները, ինչպէս նաև Թէկրանի հինգ քահանաները՝ պատարագի ամբողջական զգեստով։ Բացի մերազնէից ընարեալ բազմութենէն, բարերարի և ազգային իշխանութեան հրաւերով՝ եկեղեցւոյ մէջ ներկայ էին պետական բարձր պաշտօնեաններ և օտար հիւպատոսներ։

Այս առթիւ արուած երկու պատույ սեղաններուն մասնակցեցանք Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին և Գերաշնորհ Եպիսկոպոսներու հետ։ — Օգոստոս 2-ին Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը մենենցաւ Թէկրանէն դէպի Պէյրութ, խոկ մենք, երեք օր վիրջ, Զուշայեցաց յատուկ խնդրանքին վրայ Նոր-Զաւաւ Այցելեցինք 12 եկեղեցիները, Պօղոս ։ Եան ազգային հիւանդանոցը և ազգային պարագաները։ Պաշտօնական այցելութիւն տուինք նաև Խօֆահանի նահանգապետին, Անգլիական և Խորհրդային պետական հիւպատոսներուն և Անգլիացւոց Գեր. Եպիսկոպոսին։ Օգոստոս 17-ին վերադարձանք

Թէկրան և յաջորդ երեք օրերու ընթացքին Պաղեստին ճամբորդելու կարգադրութիւնները լրացնելով՝ 21 Օգոստոսի առաւտուն թէկրանի՛ օդակայանէն, մեկնեցանք գէպի Պաղտատի օգակայանը և հասանք կէսօրէն քիչ յետոյ:

Մեզի գիմաւորելու եկած էին՝ Գեր. Առոքէն Սրբեաս. և Պաղտատի քահանայ հայրերը՝ պատուարժան ազգայիններով, և հիւրընկալիցին Ռիձէնդ պանդոկի մէջ: Երեկոյին շնորհակալութեամբ վայելեցինք իրենց պատուոյ սեղանը, ուր ներկայ էին Գեր. Տ. Ռուբէն Արքեպս.; առաջնոդական փոխանորդը, քահանայ հայրեր և 25 յարդելի ազգայիններ:

Երբ Պաղտատ հասանք, անմիջապէս Ս. Աթոռ հեռագրեցինք մեր մեկնումի ժամը տեղեկացնելով: Նոյնը ըրինք նաև Երուսաղէմի Վակեմ. Կառավարչին:

Ցաղորդ օր մեկնեցանք Պաղտատի օդակայանը ուր ողջերթի եկած էին Գեր. Տ. Ռուբէն Սրբազն, առաջն. փոխանորդը և բազմաթիւ ազգայիններ: Մեր երախտազիւտական զգացումները յայտնելով իրենց ազնիւ ու ջերմ վերաբերմունքին համար, մեկնեցանք գէպի Պաղեստին: Լիտտայի օդակայանը հասանք ժամը 12-ին և մի քանի ժամ վերջ Ս. Աթոռ, ուր ընդունուեցանք պատշաճ հանդիսութեամբ որուն համար Զեզ և պատուարժան Միաբանութեան բոլոր անդամներուն կը յայտնենք մեր ամենաջերմ շնորհակալութիւնները:

Ֆեղեկացնելով Զեր սիրելի իութեան մեր ճամբորդութեան այս մանրամասնութիւններ, յոյ ունինք որ չուտով՝ պիտի ընդունինք նորին Ս. Օծութիւն Վեհափառ կաթողիկոսի կոնդակները և Ազգ.-Եկեղեցական Ժողովի պայտօնական զեկոյցները և առիթ պիտի ունենանք հանդամանօրէն ներկայացնելու քննուած խնդիրները և որոշումները:

Մնամք աղօթարար

ԿԻՒՐԵՂ Բ.

Պատրիարք Ս. Երուսաղէմի

ԻՄԱՍՏԱԿԵՐԵՐԵՐԻ ՎԼԵՐԱՊԱհՈՒԱԾ

Հ Ա Գ Ի Ն Ա Ն Մ Ա Հ

Իմաստակերերուն վլերապահուած
անմանուրեան մասին:

— Իսկ գալով աստուածներու կարգին հասնելուն՝ ատիկա արտօնուած է միայն անոր՝ որուն կեանքը իմաստասիրութեան մէջ անցած է, և որուն հոգին՝ մարմինէն ելած է բալորովին սուրբ, այսինքն անոր՝ որ բարեկամ է իմաստութեան: Ահաւասիկ

(*) Հոգին Անման, որ Պատառի տրամասութեան ձևով գրաւած ործերէն մինն է, ծանօթ՝ Փեղոս անունով, հայերէնի վերածուած է ի. շ. կողմէ Քրանուերէն թարգմանութիւններուն վրայէն: Այս կոորդ մաս մըն է հոգիի անմահութեան ապացուցման դլուխէն:

թէ ինչու, սիրելի բարեկամներս Սիմմիաս և կերէս, ճշմարիտ իմաստասիրները կը հեռանան մարմինն բոյոր կիրքերէն, երբեք թոյլ չեն տար իրինք իրենց պարտըւիլ անոնցմէ, ու անձնատուր չեն ըլլար անոնց. և այդ, ո՛չ թէ նման անոնց որոնք կը սիրեն դրամը, և նման ասմիկին կիրծանուելու և աղքատութեան մէջ իյնալու վախով. ոչ ալ նման անոնց որոնք կ'ընեն այդ, որովհետեւ կը վախնան իրենց վարքն ու համբաւը կորոնցնեէ, ինչպէս անոնք, որոնք կը սիրեն փառքը և պատիւները, ո՛չ, ատոր համար չէ որ անոնք կը հեռանան մարմիս կիրքերէն:

— Լաւ պիտի ըլլար այդ, ըստ կերէս:

— Ոչ, Զեւսը վկայ, չարունակեց Սոկրատ: Աւսաի, անոնք որոնք հոգ կը տանին իրենց հոգիին, և որոնք չեն ապրիր մարմինին համար, արհամարհելով բոյոր այս շահերը, որոնք մասին կը խօսէինք:

չեն բռներ նոյն ճամբան զոր ուրիշներ կը բռնեն որտեղ չեն զիտեր ուրեց կ'երթան. այս համոզուած են թէ պէտք չէ երբեք ընել այն ինչ որ հակառակ է իմաստասիրութեան, ոչինչ ընել որ՝ կը հակառակի անոր իրագործած ազատագրման ու սրբագործման. անոնք կը յանձնեն իրենք զիրենք անոր առաջնորդութեան, կը հետեւին իրեն, ամէն ուր որ ան կ'ուզէ տանիլ զիրենք:

— Խնչպէս Սոկրատ:

— Պիտի բացատրեմ. ահաւասիկ ինչ մտածումով զիտութեան ծարաւի մարդկի, ինքինքնին կը գնեն իմաստասիրութեան ձեռքբռուն մէջ. իրենց հոգին, սերտորէն կապուած ու փակած է մարմինին, բռնագատուած՝ իրերը նկատելուն, ոչ թէ ինք իրմով, այլ զգայարանքներուն միջնորդութեամբ, իրեւ բանտի մը մէջէն անիկա սուզուած է կատարեալ տղիտութեան մը մէջ: Փիլիսոփայութիւնը առնելով անոնց հոգին, այդպիսի վիճակի մը մէջ, ու ճանչնալով որ բանահն (մարմին) ոյժը յառաջ կուզայ կիրքերէն, քանի որ այս զերշինները այնպէս մը կ'ընեն որ բանարկեալը ինքն իսկ օգնէ իր շղթաներուն ամրապնդման, իմաստասիրութիւնը, կ'ըսեմ, ու ասիկա զիտեն զիտութեան բարեկամ մարդերը, կը քաջալիերէ հոգին քաղցրօրէն ու կը ջանայ զայն ազատագրել. ան, անոր ցոյց կուտայ թէ աչքերու վկայութիւնը պատրող է, և թէ ականջներուն և միւս զգայարանքներուն վկայութիւնը, նուազ անսխալական չէ, ուրեմն ան կը հրաւիրէ զայն անսոցմէ բաժնուելու, այնքան ատեն որ ստիպուած չըլլայ զանոնք գործածել. անոր խորհուրդ կուտայ տակաւին, ներամփուելու ու փակուելու ու փակուելու ինքն իր մէջ, մի միայն ինքինքնին հաւատաւուր, ըմբռունելէ յետոյ, զուտ մտածմամբ, իրերու իսկութիւնը, և իրեւ սիսալ ընդունելու ինչ որ պիտի քննէ միջնորդով մը ու ինչ որ կը տարրերի ըստ զգայարանքին զոր կը կիրարինք. վերջապէս ան (իմաստասիրութիւնը) կ'աղդարարէ անոր թէ ինչ որ կը անսոնք զգայարանքներու միջոցաւ, զգալին ու տեսանելին է, և թէ ինչ որ ինքն իրմով կը տեսնէ, իմանալին ու անտեսանելին է:

Ճշմարիտ իմաստասէրին հոգին, համոզուած՝ որ պէտք չէ հակառակի այս ա-

զատագրման, կը հրաժարի որքան որ կարելի է, հանոյքներէն և ցանկութիւններէն, տիրութիւններէն և երկիւղներէն, նկատելով որ ուրախութիւններն ու վախեռը, տրտմութիւններն ու չափազանցուած ցանկութիւնները, իրենց հետեւանք կ'ունենան միայն չարիքները, ինչպէս որ ամէն մարդ կրնայ նախատեսել, ինչպէս հիւանդութիւնները, կամ ինչքերու կորուսար, հետեւանք, կիրքերու, այլ մեծագոյնը ու ամենագերշինը չարիքներուն, չարիք մը՝ որուն զիտակցութիւնը չունինք:

— Ո՞րն է այդ չարիքը, հարցուց կերէս:

— Այն թէ, չափազանց հանոյքներ ու վիշտեր կրած մարդու մը հոգին, անկրամեշտօրէն կը բերուի կարծելու թէ ատոր պատճառը շատ ճշմարիտ ու շատ յստակ է, թէ այդպէս չըլլայ: Արդ, բոլոր այս բաները տեսանելի բանները չեն մանաւանդ:

— Անտարակոյս:

— Ու մանաւանդ այս կարգի յուզումներով չէ՝ որ հոգին շղթայուած է մարմինին:

— Խնչպէս:

— Ամէն հանոյք, ամէն ցաւ, տեսակ մը գամէ որ կը գամէ ու կը սեւենէ հոգին մարմինին. զան նման կը գարձնէ մարմինին և անոր ճշմարիտ կարծել կուտայ ինչ որ մարմինը իրեն կ'ըսէ: Արդ, այն վայրկեանէն իսկ երբ անիկա բաժնեւ կից կ'ըլլայ մարմինին կարծիքներուն ու հաճոյքներուն, ստիպուած է, կը կարծեմ, առնելու նաև միեւնոյն սովորութիւնները, ու հետեւարար անոր անկարելի է հասնի զուտ վիճակի մէջ Հաղէս՝ միա աշխարհը՝ այլ անիկա միշտ լեցուն է մարմինով զոր կը ձգէ. անոր համար իսկոյն ուրիշ մարմինն մը մէջ կը նետուի ու հոն՝ տունկի մը պէս՝ արժան կը բռնէ, ինչ որ զայն կը զրկէ զուտ, պարզ ու աստուածային իսկ կութեան յարաբերութենքն:

— Շատ ճիշդ է, Սոկրատ, յարեց կերէս:

— Ասո՛ր համար է որ, սիրելի կերէս, ճշմարիտ իմաստասէրները քաջ և ժուժկալ կ'ըլլան, և ոչ թէ՝ բոլոր այն պատճառներով որով սովորական մարդիկ այդպէս կը թուին ըլլալ: Դուն ալ այս վերշիններուն պէս պիտի մտածէիր:

Ոչ անշուշտ:

— Արդարեւ, ճշմարիտ իմաստասէրին հոգին, երբեք պիտի չխորհի թէ փիլիսոփայութիւնը պէտք է զի՞նք աղատէ, որպէս զի ինքինը վերստին լքէ հաճոյքներուն և ցաւերուն, աղատուած ըլլալէ ետք, ձգէ որ շղթայուի անոնցմով գարձեալ. ու այսպէս ընէ անվերջ աշխատանք մը: որպէս թէ փիլիսոփայութեան գործը ըլլար Պինէլուպէի^(*) կտաւը հիւսել: Ընդհակառակը, հանդարտութիւն պարտադրելով կիրքերուն, հետեւելով բանականութեան, չբաժնուելով անկէ երբեք, և սնանելով ճշմարիտին, աստուածայինին ու սովորական կարծիքներու կալուածէն անդին եղածին հայեցողութեամբը. կը հաւատայ հաստատապէս թէ պարտի ապրիլ այդպէս, այս կեանքի ընթացքին, ու թէ մահէն յետոյ պիտի երթայ միանալ անոր՝ որ իրեն նմանէ. ու աղատուած պիտի ըլլայ մարդկային վիճակին ցապուած չարիքներէն:

Այսպիսի հրահանգներու, ով Սիմմիաս և Կերէս, ուր այս սկզբունքներուն հետեւած ըլլալէ վերջ, ուէ պատճառ չկայ որ հոգին վախնայ թէ իր մարմինէն մեկնելուն, հոգերը զի՞նք տանին ու ցրուեն, և ա՛լ դոյութիւն չունենայ:

Սիմմիասի և Կերէսի կակածները. —

Սոկրատ կը յորդորէ որ խօսիմ առանց երկիւյի:

Սոկրատին այս խօսքերէն վերջ, երկար լուսութիւն մը տիրեց: Մոկրատ կը թշւէր բոլորովին մտացրաւուած ըլլալ իր ըսածներովը, ինչպէս մեզմէ շատեր: Կերէս և Սիմմիաս կը խօսակցէին ցած ձայնով: Սոկրատ, նշմարելով ի վերջոյ զանոնք — թնչ, ըստ, մի գուցէ ձեզի այնպէս թուի թէ բան մը պակաս ըսոււած է, քանի որ այս բոլորը, տակալին տեղի կուտան շատ կասկածներու և առարկութիւններու, եթէ ուզուի մանրամանօրէն քննել: Եթէ ուրիշ բանի մասին կը խօսիք, ըսելիք չունիմ. բայց եթէ այն բա-

նին վրայ է որ կասկածներ ունիք, մի վարանիք խօսելու ու ձեր կարծիքը յայտնելու, կը բաւէ որ ձեզի այնպէս թուի թէ ներկայ հարցը կարելի է գեր լաւագոյնս պարզեւ: Հաղորդակի՛ց ըրեք զիս ձեր ուրոնումին, եթէ կը հաւատաք որ ինձի հետ աւելի զիւրաւ լուծման մը պիտի կրնաք յանգիլ:

— Ճշմարտութիւնը պիտի բամբ քեզի, Սոկրատ, պատասխանեց Սիմմիաս: Երկար ատենէ ի վեր որ տարակոյսներ ունինք կերպս և ես, ու փափաքելով որ լսենք քեզմէ անոնց լուծումը, մեզմէ մէկը միւսը կը մէկ որ ի՞նք առաջարկէ զանոնք քեզի: Բայց կը վախնանք քեզ նեղացնելէ: Կը վախնանք որ ի՞նչիրը քեզ հաճելի չըլլայ քու դժբախտութեանդ մէջ:

— Է՛հ, սիրելիդ իմ Սիմմիաս, պատասխանեց Սոկրատ քաղցրօրէն ժպտելով: ո՞րքան դժուարաւ պիտի համոզեմ միւս մարդկը թէ ես երբեր դժբախտութիւն մը չեմ համարիր իմ ներկայ վիճակս, քանի որ ձեզ իսկ չեմ յաջողիր համոզել ատոր ու կը վախնաք թէ մի գուցէ ես այս պառուն աւելի՝ գէշ տրամադրութեան մը մէջ գտնուիմ քա՞ն իմ անցեալ կեանքիս մէջ: Ուրեմն կ'երեւի թէ գուք զիս շատ վար կը համարիք կարապներէն, գուշակութեան ձիրքն մէջ:

Կարապները կ'երգեն ամբողջ իրենց կեանքին. բայց երբ կը զգան թէ պիտի մեռնին, աւելի՛ շատ կ'երգեն ու աւելի՛ գեղեցիկ, այդ օրը, իրենց ծառայած աստուածը երթաւ գտնելու իրենց ուրախութեանը մէջ:

, Բայց մարդկի որոնք իրենք կը վախնան միռնելէ, կը չարախօսեն այդ կարապներու մասին, ըսելով թէ անոնք իրենց մաշեց կուլան և իրենց ախրութիւնն է որ կ'երգեն: Զեն խորհիր թէ չկայ թուուն մը որ երգէ երբ անօթի է կամ կը մսի, կամ երբ կը տառապի ուէ ձեւով, ոչ իսկ սոխակը, ծիծեռնակը, կամ յոպոպը, որոնց երգին համար կ'ըսուի թէ ողք մըն է: Բայց ո՛չ այս թուշաները, ո՛չ ալ կարապները, կը թուի ինձ որ կ'երգեն ախրութիւնն էն: Ես կը հաւատամ, աւելի, որ կարապները Ապոլոնին պատկանելով, գուշակներ են. և թէ նախասեսելով այն երջանկութեամբ ցերեկին հրասած կտաւը կը քակեր գիւրը:

գեն և կ'ուրախանան ա'յդ օրը աւելի քան
երբեք. Ու կը խորհմ թէ Ես ալ նոյն Աստ-
ուածը կը պաշտօն, ու իրենց նման Ես ալ
անոր կը պատկանիմ. թէ անոնցմէ նուազ
չեմ ընդունած Ես ալ Վարդետէն (Ազո-
ղոնէն) գուշակութեան արուեստը. և թէ
Ես ալ անոնց պէս՝ չեմ ցաւիր այս կեան-
քէն մեկնուու:

Ահա՝ թէ ինչու ձեզի կը մնայ խօսելու
հարցափորձել զիս, որքան որ ուզէք, որ-
քան ասեն որ Տասնեմէկը արտօնեն:

— Եսաւ լաւ, Սոկրատ, յարից Սիմմիաս:
Ուրեմն, ես քեզի պիտի յայտնեմ իմ
տարակայաներս, և կերէս պիտի պարզէ քեզի
իր կարգին թէ ինչո՞ւ չ'ընդունիր ինչ որ
ըսուեցաւ:

Նախ, ինչ կը թռուի, ինչպէս քեզի ալ,
Սոկրատ, որ այս նիւթերու մասին անկա-
րելի է, կամ գոնէ շատ զժուար, ճանչնալ
ճշմարտութիւնը այս կեանքին մէջ: Բայց
և այնպէս, չքննել ամենամեծ խնամքով,
ինչ որ այդ մասին կ'ըսուի, լքել հարցը
առանց մեր բոլոր կարելի շանքը թափելու,
այդ պիտի ըլլար ամառ մը արթքը:

Որոգնեան երկու բաներէն մէկը պէտք
է. կամ ուրիշներէն սորզիւ, ինչ որ այդ
մասին կայ, կամ զայն ինքնիրենը զանել:
Կամ այս երկութիւն ալ անկարելիութեան
պարագային, ընարել մարդկային բոլոր
պատճառաբանութեանց մէջ լւազորնը ու
ամէնէն գժուար ժխտելին ու անս'ը մէջ
տեղ անեն, իբրև լաստի մը մէջ, անցնե-
լու համար ո ո է կերպով այս կեանքին.
բացի այս պարագայէն ուր կարենանք ընել
այդ աւելի՝ ապահով և նուո՞զ վասնգաւոր
ձեռզ մը, զմեզ յանձնենելով աւելի՝ հաստա-
տուն լաստի մը՝ Աստուածային հօսքի մը:

Երբեք պիտի չամշնամ քեզի հարցումներ
ընելու քանի որ կ'արտօնեն այդ, ու ինքին-
քըս պիտի չմասնեմ այն մեղագրանքին զոր
պիտի կրնայի նեն, ինծի օր մը, քեզի ըսած
չըլլալուս համար կ'իմա՞', ինչ որ կը մտածեմ:

Եղր ինքինքիս ու կերէսին հետ կը
քննեմ ինչ որ ըսիր, Սոկրատ, քեզի կը
խոսովանիմ թէ այդ բոլորը ինձ բաւա-
րար չի թուիր:

Սիմմիաս առակորիւնը. —

Հոգին թերեւ ներդաշնակուրին մըն է լոկ:

Ասոր վրայ, Սոկրատ — թէրեւս իրաւ-

ուունք ունի՛ս բարեկամս, բայց ի՞նչ բանի
մէջ է որ այդ բոլորը քեզ բաւարար չի
թուիր:

— Անոր մէջ որ կարելի պիտի ըլլար
նոյն փաստարկութիւնը ընել քնարի մը ներ-
դաշնակութեան համար. քնարին համար
ինքնին՝ և լարերուն:

Լաւ լարութե քնարի մը՝ ներդաշնա-
կութիւնը, կարելի պիտի ըլլար ըսել, ան-
տեսանելի, աննիւթեական, շատ գեղեցիկ
ու Աստուածային բան մըն է. մինչդեռ
քնարը ինքնին՝ և լարերը՝ մարմիններ են
և նիւթական բաղադրեալ ձեւեր, երկրային
տարրեր, բնութեամբ նման կորնչելի բա-
ներու:

Ի՞նչ պիտի ըսէինք ուրեմն, եթէ մէկը
քնարը կոտրելէ, անոր լարերը կտրած փըր-
ցուցած ըլլալէ վերջ, ջանար հաւաստելու,
քեզի պէս, պատճառաբանելով թէ անհրա-
ժեշտորէն այդ ներդաշնակութիւնը կը մնա՞յ
զեռ ու կորսուած չէ երբեք: Մտուզիւ
անկարելի է որ քնարը մնայ տակաւին, անգա՞մ մը որ իր լարերը կորուած են,
քանի որ լարերը կորնչական բաներ են, և
թէ ներդաշնակութիւնը որ կապակցու-
թիւն ա աղերս ունի Աստուածայինն տ
անմակին կետ, չի տեսեր այլևս և կը կոր-
սուի, կորսուելով այսպէս՝ նախ քան այն
ինչ որ մահկանացու և երկրային է. և ի՞նչ պիտի ըսէինք, եթէ աւելցնէր թէ ամէն
կերպով անհրաժեշտ է որ ներդաշնակու-
թիւնը զոյութիւն ունենայ տեղ մը. և թէ
քնարին փայտն ու լարերը փոշի վերած-
ուած ըլլան նախ քան ներդաշնակութեան
նուազագոյն վասիք մը պատահիլը, Եւ գուն
ինքդ, Սոկրատ, կը խորհմ նկատեցի թէ
մեր ամէնէն սովորական կերպով ընդունած
կարծիքը, հոգիին մասին, այն է թէ տաքը
և պաշը, չորը և խոնաւը և ասոնց նման
յատկութիւններ, ընդարձակելով կամ սեղ-
մելով մեր մարմինները հոգին՝ խանուուրդը
և ներդաշնակութիւնն է այդ տարրերուն,
երբ անծնք ճիշդ համեմատութիւններով
բաղդրուած ըլլան:

Արդ, եթէ մեր հոգին պատահաբար ներ-
դաշնակութիւն մըն է միայն, ակնյայնի է
որ եղր մեր մարմինը չափացանց թոււնայ
կամ չափացանց պրկու՛ հիւանդութիւն-
ներէ կամ ուրիշ ցաւերէ՝ անհրաժեշտաբար
պէտք է որ մեր հոգին ո՛քան ալ որ աստու-

ուածային ըլլայ՝ կորսուի՛ անմիջապէս. Նման միւս ներդաշնակութիւններուն, ու բոնք կը գտնուին ըլլայ՝ երաժշտական գործիքներուն մէջ, ըլլայ՝ արուեստագէտներու բոլոր միւս գործերուն մէջ. մինչգեռ իւրաքանչիւր մարմին մնացորդները կը տեսն դեռ երկար, մինչեւ որ այրուին կամ նեխին: Տես ուրեմն Սոկրատ, թէ ինչ պիտի ըսենք այս խօսքին դէմ, երբ մէկը պնդէ որ մեր հոգին մեր մարմին տարրերուն մէկ խառնուրդը ըլլալով միայն, ամէնէն առաջ ինք կը կորսուի մահ ըսուած բանին մէջ:

Առարկութիւն Կերեսի, — բայց հոգին կը վերապրի բազմարի մարմիններու մէջ. թերեւ ան աղ վերջապէս կը մեռնի:

Սոկրատ այն ատեն իր նայուածքը մեր վրայ պատցներով, ինչպէս յաճախ սովոր էր ընել — Սիմմիար լա՛ւ կը խօսի, ըսաւ ժպտելով թերէ ուրեմն ձեզմէ ունէ մէկը ինձմէտ աւելի՛ պատասխանելու ի վիճակի է, ինչո՞ւ չի պատասխաներ, որովհետև կը թուի թէ տկարութեամբ չյարձակեցաւ իմ խօսքին վրայ: Այնուանդներձ, ինձ կը թուի թէ պատասխանելէ առաջ, պէտք է մտիկ ընել նաև Կերէսի՛ առարկութիւնները, որպէսզի իր խօսած ատեն, ժամանակ շահինք ու կարենանք մտածել մեր ըսելիքին վրայ. որպէսզի այսպէս երկուոքն ալ մտիկ ըրած ըլլալէ վերջ, մենք ընդունինք իրենց պատճառաբանութիւնները, եթէ զանոնք ճիշդ գտնենք. իսկ եթէ ոչ, ներկայացնենք մե՛ր պաշտպանութիւնը: Ըսէ՛ մեզի ուրեմն, Կերէս ինչ որ քեզ կը խռովէ ու կ'արգիլէ որ համոզուիս:

— Պիտի ըսեմ ահա, պատասխանեց Կերէս:

Ինձ կը թուի թէ վիճարանութիւնը միշտ նոյն կէտի վրայ է. և այն առարկութիւնները որ նախապէս ըրինք, ի զօրու կը մնան միշտ:

Թէ մեր հոգին գոյութիւն ունեցած է նախքան իր ներկայ ձեին մէջ երկիլը, չեմ ուրանար. թէ ճարտարօրէն ապացուցած եղար և նոյն իսկ եթէ չքաշուէի չափագանցած ըլլալէ, պիտի ըսէի որ մլուլի ապացուցած եղար. բայց թէ մեր հոգին իր գոյութիւնը կը շարունակէ դեռ, թերեւս տեղ մը վերջն ալ, ա՛յդ է որ գոյ վաստարկութիւնդ ինչի չի թուիր ապացուցանեկ:

Այնուանդերձ համաձայն չեմ Սիմմիար սի առարկութեան, թէ հոգին մարմինէն ոչ աւելի զօրաւոր ոչ ալ աւելի տեւական ըւլայ. որովհետև ընդհակառակը այդ յատկութիւններով կը թուի ինձ թէ հոգին անհուսըքն կը գերազանցէ մարմինը:

Ինչո՞ւ համար ուրեմն, պիտի ըսէին ինձի կը մնաս քու տարակոյսի մէջ, քանի որ կը տեսներ թէ ինչ որ մարդուն մէջ նուազ զօրաւոր է, դեռ կը մնայ մահուրնէն վերջ: Զի՞ թուիր քեզի թէ, անհրաժեշտաբար, ինչ որ աւելի տեսական է, վերապրի նոյն ատեն: Տես թէ այս մասին հաստատ բան մը պիտի ըսեմ, առով մէկտեղ, կարծիմ թէ Սիմմիար նման ես ալ պատկեր մը գործածելու պէտք ունիմ:

Ինձ կը թուի թէ այսպէս պատճառաւաբանելը, պիտի ըլլար նման ըսելու՛ ծերունի սստայնանկի մը համար, որ մեռած է այս մարդը մեռած չէ, այլ կ'ապրի տեղ մը: և փաստը ա՛յն է որ, այն զգեստը զոր կը կրէր և զոր ինքն իսկ գործած էր, դեռ ամրող է ու չէ կորսուած. ու եթէ ունէ մէկը կասկածէր տակաւին, իրեն պիտի հարցուէր, մըն է աւելի տեսականը, մարդը թէ զգեստը զոր կը գործածէ ու կը կրէ: Եթէ պատասխանէր թէ մարդը շատ աւելի տեսական է, այն ատեն պիտի հարծէինք իրեն պատցուցած ըլլալ թէ մարդը տեսակաւին կը մնայ, քանի որ ինչ որ իրմէ նուազ զիմացկուն է, չէ կորսուած: Բայց այսպէս չէ, կարծեմ, Սիմմիար. որովհետև, զո՞ւ ալ քննէ ինչ որ պիտի ըսեմ, ամէն մարդ կը զգայ որ նման պատճառաբանութիւնն մը, անհեթեթութիւն մը պիտի ըլլար:

Արդարեւ այս սստայնանկը մեծ թիւով զգեստներ մաշեցնելէ վերջ, զորս ինք իսկ գործած էր, մեռած է անոնցմէ վերջ, բայց կը իսորկիմ, վերջինէն առաջ. ու ատիկա պատճառ մը չէ որ մարդը հագուստէն աւելի՛ ակար ու նուազ տեսական ըլլայ: Այս, ճիշդ հոգւոյն ու մարմին պատկերն է. և ըստ իս, նուազ ճիշդ չէ ըսել թէ հոգին՝ աւելի՛ երկար կ'ապրի ու մարմինը՝ աւելի՛ տկար է և նուազ տեսական. ատով պիտի իմացնենք թէ մաէն հոգի կը մաշեցնէ բազմաթիւ մարմիններ, մանաւանդ, երբ շատ տարիներ կ'ապրի, որովհետև եթէ մարմինը կը փնձնայ ու կը մեռնի անդադար, մինչ մարդը կ'ապրի տակաւին. ու եթէ հոգին կը

վերհիւսէ, ընդհակառակը իր պատեանը ան-
դադար քանի մաշի, անհրաժեշտօրէն կը
հետեւի թէ երբ հոգին կը մեռնի, հասած է
իր զերջին զգեստին և թէ ասրկա միակն է
որմէ առաջ ան կը գարդրի գոյութիւն ունե-
նալէ. մինչդեռ մարմինը հոգին մեռնեցն
վերջը, ոսց կուտայ իր բնութեան տկարու-
թիւնը, կը խաթարուի ու կը ցրու շուտով՝

Այսպէս, այնքան հաւատաք ընձայելու
չէ այն խօսքին թէ մեր մահէն վերջ մեր
հոգին զեր կը մնայ անզ մը: Որպէսետե
եթէ այս կարծիքի մէջ քեզմէ աւելի՞ հե-
ռու երթայինք, համաձայնելով թէ ոչ մի-
ան մեր հոգին գոյութիւն ունէր մեր ծնուն-
դէն առաջ, այլ տակաւին թէ ոչինչ կ'ար-
գիլէ որ մեր մահէն վերջը ան շարունակէ
գոյութիւն ունենալ և վերածնիլ շատ ան-
գամներ՝ վերստին մեռնելու համար, քանի
որ հոգին բաւական զօրաւոր բնութիւն մը
ունի, բաղմաթիւ ծնունդներու զիմազգա-
ւել կարենալու չափ, եթէ, կ'ըսմէ, այս
բոլորին համաձայն էք, բայց անց հա-
մաձայնելու թէ հոգին չի լոգնիր ծնունդ-
ներու այս յաջորդականութեան մէջ և թէ
չի մեռնիր՝ կորսուելով այդ մահերէն մէ-
կուն մէջ, եթէ աւելցնէք թէ ոչ ոք կրնայ
գիսնալ թէ ո՞րն է այն մահը, ո՞րն է մար-
մինէն այն բաժանումը, որով հոգին պիտի
կորսուի, որովհետեւ ոչ ոք ատոր զգացումը
կրնայ ունենալ, եթէ այս այսպէս ըլլար,
ուեւէ մարդու լաւ պիտի ըլլար որ մահէն
չվախնար, որովհետեւ իր անվեհերութիւնը
տիմարի մը անվեհերութիւնը պիտի ըլլար,
բացի այն պարագայէն երբ ի վիճակի ըլլար
ապացուցաներու որ հոգին բացարձակապէս
անմահ և անկորնչական է, այլապէս, ան-
հրաժեշտ է որ աեսնելու վայրկեանին վախ-
նայ միւս որ մի գուցէ իր հոգին անվերա-
գարձ կորսուի, մարմինէն այդ անգամ իր
բաժանումին ատեն:

Ի. Դ.



ԳՐԱ-Ք'ԱՆԱԴԱՄԱԿԱՆ

ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆԳԱՄԵԱԿ ՄԸ

ԳՐԱԿԱՆ ԳԻՆՆԱԴԱՄԱԿԱՆ ԹԻ ԳՐԱԿԱՆ
ՏԵՍԱՐԻԹԻՒՆՆԵՐ

Ա.

ԶԵՒԱՊԱՇՈՒԹԻՒԹԻՒՆ

(FORMALISME)

Ահա ուրիշ ալ փոփոխակներ Զեւա-
պաշուներու գրական տեսութիւններէն.

Հստ ոմանց (Զեւապաշուներ) գրական
շրջափոխութիւնը յաջորդութիւն մըն է ձեւ-
ւերու եւ սեպերու: Հստ Թոմաչէվսքիին
գրական գործի մը արժէքը իր նորութեան
և ինքնապաւութեան մէջ կը կայանայ: Ու-
րիշ մը (Շքոլովսքի) կ'ըսէ և Արուեստի ձեւ-
ւերը նկատաման կ'արժանանան իրենց
գեղարուեստական օրինաւորութեամբ: Նոր
ձեւ, մը չի գար նոր պարուանկութիւն մը
(Խորք) արտայատելու, այլ փոխանորդե-
լու կին ձեւին որ կորսնցուցած է իր զե-
զարուեստական արժէքը: Նոյն գաղա-
փարը՝ Այիսնպաւումէն և արուեստը կ'ապրի
կտրել անցնելով, հակադրելով իր սեպհա-
կան աւանդութիւնները, ասոնք բնողլայնե-
լով, փոփոխելով համաձայն հակագրու-
թեան, բացու-ի օրէնքներուն:

Զեւապաշուները անշուշտ այս ամէնը
չեն օրինադրեր մասնաւոր օրէնքներով ու-
ռոնք կառավարէին այս շրջափոխութիւնը:
Ուրիշ մը, դասախոս Ցիրուունքի, կ'ըն-
դունի, այս օրէնքներուն կողքին, ուրիշ-
ներ ալ: Արուեստը կրնայ ձեւ ըլլալ: Բայց
կրնայ արդիւնք մը ըլլալ իմացական գոր-
ծունէութեան մը: Կրնայ՝ ընկերային ա-
րարք մը և ազդակ մը ըլլալ: Ըլլալ բա-
րոյական, կրօնական, կրթական արարք մը,
ազդակ մը նոյն ատեն: Syncretic ձեւերը
(ստեղծագործութեան) չեն երեւիր միայն
քաղաքակրթութեան նախաւոր աստիճան-
ներուն: Նովալիս, Նիչէ, Անտրէ Պէլիի,
գործեր ունին ուր բանաստեղծութիւնն ու
իմաստափրութիւնը կը համախառնուին.
աւելցուցէք ձգտումաւոր գրականութիւնն

ալ ուր արուեստի առարկան կ'ընկերացուի բարոյախօսական կամ ընկերային քարոզին, Ցիրմունսքի «Ճգուտմնաւորութիւնը» կ'ընդունի լայն իմաստով մը, քանի որ գրական գործերու մեծամասնութեան հասարակաց է անիկա:

Անգամ՝ մը որ ընդունուի թէ միջոցը չէ միայն արժողը գրական գործին մէջ, կը հետևի ինքնարերարար սա թէ գարձեալ մինակը չէ գրական շրջափոխութեան իր ազդակ: Ցիրմունսքին կը մերժէ Սագուասոնի գրարաջը «թէ Միջոցը գրականութեան մէջ միակ հերոսն է»: Ան ժողով Պէտրէի հետ կը մտածէ որ Գրանսական հերոսապատում զրոյցներուն մէջ կայ ազդեցութիւնը գանական մշակոյթին, եկեղեցական քաղաքականութեան եւ մենաստաններու կենցաղին:

Ցիրմունսքի կ'առարկէ նաև այն բացատրութեան որուն համեմատ զրական ձեւերու յաջորդութիւնը պայմանաւոր է հակադրութեամբ (տեսնել զերը այս բառին թելադրանքը): Հակադրութիւնը միակ ազդակը չէ Կրնար ըլլալ ու չի բացատրէր պայմանական պրոցեսին ուղղութիւնը, քանի որ այդ հակադրութիւնը կրնայ ծնունդ սալ բազմաթիւ անհանդոյն ճագառութերու: Ցիրմունսքին չ'ընդունիր նաև որ գրամանութիւնը կամ բանաստեղծութիւնը ըլլան միւայն ձեւական, առանց առարկից: Ընդհակառակը, ան կ'ըսէ թէ բանաստեղծութիւնը ճնշէ ինչպէս նկարչութիւնը, քանակագրութիւնը, ու բոլորին տարրեր՝ երաժշտութենէ և զարգանկարային գծագրութենէն, է մէկը այն արուեստներէն ուրոնք առարկայ մը ունին: Ժամանակակից քերթողականները յոտի են երբ կատան նախապատռութիւն կառուցման հարցերու թեմական (thematic), այսինքն նիւթի, խորքի հարցերէն: Տաղաչափութեան, գործիականացման (instrumentation), համաձայնութեան (syntax) ու հանգոյցը (plot) վարելու հարցերը չեն սպառեր քերթողականները: Գրական գործի մը գեղագիտական ուսումնասիրութիւնը այն ատեն միայն ամրողական է երբ կ'ընդգրէ նաև Քերթողական քիմաները, այսպէս կոչուած՝ պարունակութիւնը, պատկանը՝ գործի, նկատի առնուած՝ գեղագիտութիւնը, հզօր ազդակներ ինչպէս:

Աւ զերջապէս, Ցիրմունսքին կը մերժէ,

զատուելով ձախութե ձեւապաշտներէն, հաւասար աստիճանի վրայ թերել զուտ քնարական կառոյց մը և արգի՛ հոգերանական գէպը: Երկուքին մէջ, աղերոց կառուցումին և թեմային տարրեր է գրեթէ բոլորովին: Մինչ քնարական քերթուած մը, արգարեկոր մըն է բառական արուեստի, ամբողջութեամբ ստորագասուած գեղագիտական նպատակի մը, վէպ մը Թուլթոյէն կամ Սթանտալէն կը գործածէ բառերը իրենց չեղոք տարողութեան մէջ, ստորագասելով զանոնք, ինչպէս առօրեայ լեզուին մէջ, իրենց հաղորդականութեան պաշտօններուն և նման գործ մը, եթէ նկատուի իսկ գործ մը բառական արուեստի, պիտի նըշատուի բոլորովին տարրեր ձեռվով մը քնարական քերթուածէն: Արդարեն կան զուտ ձեւական (formal) գեղարուեստական վէպեր, որոնց մէջ ոճի տարրերը և կառուումը կը մնան զերացաս: Կոկոլ, Լէսքով, Ռէմիլովֆ, Անտրէ Պէլի զրած են զարգանկարային այդ ոճով: Բայց ճշշդ նման գործերը բարեկարգութեամբ նման թուլթոյի, Սթանտալի, Ֆայթայզովի վէպերուն որոնց մէջ բառերը գործածուած են իրենց չեղոք տարրեր, կամ գործածելով ձեւապաշտներու խօսքերը, չեն ըմբռնուած իրենց ինքնարժէ իմաստին մէջ, այլ իրենց յարակից, գովընտի բուրք իմաստներով:

Այս ամէնը կը գերարերի ձեւապաշտութեան, նոր գարցից մը՝ գրական գիտութեան մէջ և ոչ թէ գրական քննադատութեան: Բայց նական է որ այս ամէնը ըլլան ազդած իրենց գրական ստեղծագործութեանց վրայ, ինչպէս ժամանակակից գործերու մասին՝ իրենց դատաստաններուն: Գիտենք որ էնէկէհարտի սկզբունքային տարրերութիւն մը կ'ունէր ընդմէջ զրականութեան ուսումնասիրութեան կը արագական կայանալ: Եթէ կայանալ, կ'ըսէ ան, չունի պաշտօն մը խորազնին քննութեան մը ենթարկելու արուեստը (investigate), անիկա լրացուցիչն է արուեստին, անոր զերջին կայանը: Եթ առարկան՝ տըրուած արուեստի գործ մը իրանալի ընելի է ժամանակակից հասարակութեան մը արուեստի գիտակցութեան: Գիտական առարկայականութեան մը չափանիշը (criterion) չի կրնար գործածուիլ քննադատութեան

համար։ Ան միշտ ենքականական է, քանի որ քննադատուուած գործը պիտի անցնի քննադատին անձին ընդմէջէն, իբր ներկայաւցուցիչը՝ զատմական և ընկերային որոշ շԵՐ-ՂԱՊԱՍԻ մը ու նոյն հեղինակը կ'ընդունի թէ ձևապաշտներու քննադատական փորձերը կը ձգեն տարօրինակ տպաւորութիւն մը։ Եւ ասկայն անհեթթի պիտի ըլլար ուրանալ անհուսափելի յարընչութիւնը (connection) գրական զիտութեան և քննադատութեան միջէ, պահանջել որ անոնք պարտաւոր են գործածել տարրեր չափանիշներ։ Գրական քննադատութիւնը պէտք չունի ամբողջովին առարկայական ըլլալու։ Ան կրնայ գրականութեան պատմիշին կողմէ յայտարարուած օրէնքներուն մէջ մտցնել փոփոխանք, ու նկատե առնել գէպքեր ու տարրեր զորս գրականութեան պատմաւթիւնը կը ձգէ զուրու իր կալուածէն։ Բայց ձևապաշտութեան յարած գրական քննադատ մը ինչպէս կրնայ իր գնահատմանց մէջ դիմադրել փորձութեանը ձեւապաշտ չափանիշներ գործածելու։ 19րդ դարու երկրորդ կէսին առս գրականութեան պատմիչները զօրաւոր ազգեցութեան տակն էին գրական քննադատութեան գքաղաքացիք (civic) ձգտութերուն։ Եթէ այս պրոցէսը այնքան զգալի չէ, պատճառը ան է որ գրականութենէն աւելի քննադատութեան մէջ է որ կը տիրէ ճնշումը պաշտօնական վարդապետութեանց։ Ու Սովետ Ռուսիոյ մէջ պաշտօնական գրացործ գրական քննադատութեան՝ (այսպէս կոչուած մաքսիսն կամ ընկերանական քննադատութիւն) բացէ ի բաց գէմէ է ձեւապաշտութեան եղաւ ըլջան մը — շրջանը ճնշումի թուլացման — երբ ձեւապաշտութերը կրնային իրենց տեսակէտները արտայայնել աւելի կամ նուազ ազտօրէն։ Բայց աստիճանաբար ու մասամբ՝ ճնշումի ներքեւ, ձեւապաշտութիւնը ենթարկուեցաւ ներքին ըլջափոխութեան մը, ու մասնաւորաբար իր յարաբերութեանց 1927-ին, իբր ուսումնակիրութեանց ծիրէն ներս առա հարցերը որոնք կը գորուին գրական իրողութեանց ընկերային և պատմական ճննդաբանութեան չուրջ (genetic)։ Այս փոփոխանքը մասմաս արդիւնք էր արտաքին պատճաներու։ Մինչև այդ թուլականը, ձեւապաշտութիւնը միակ չար-

